ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

BADASYAN CONSULTING

ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՕՐԵՆՔՆԵՐ

«Անձը հաստատող փաստաթղթի մասին» ՀՕ-210-Ն օրենք (ընդունված՝ 11.05.2026թ., ուժի մեջ՝ 30.10.2026 թ.)

- Օրենքը, փոխարինելով «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» և «Նույնականացման քարտերի մասին» օրենքներին, մեկ իրավական ակտով կարգավորում է ինչպես ՀՀ քաղաքացիների, այնպես էլ օտարերկրացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և փախստականների անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման հետ կապված հարաբերությունները:
- Նոր կարգավորմամբ 16 տարին լրացած քաղաքացիների համար նույնականացման քարտ ունենալը դառնում է պարտադիր՝ նախկին կամավոր սկզբունքի փոխարեն: Միաժամանակ նույնականացման քարտ ստանալու նվազագույն տարիքը 16-ից իջեցվում է մինչև 6 տարեկան, իսկ նույնականացման քարտի վավերականության ժամկետը նախկին 10 տարվա փոխարեն սահմանվում է 5 տարի: Ընդ որում, 16 տարին լրացած քաղաքացուն անձնագիր տրամադրվում է միայն նույնականացման քարտ ունենալու դեպքում:
- Ներդրվում է անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման էլեկտրոնային միասնական հարթակ, որի միջոցով դիմողները կարող են ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը, անցնել բնակչության պետական ռեգիստրի տվյալների հետ համապատասխանության ստուգում, վճարել պետական տուրքը և նախապես ամրագրել լիազոր մարմին այցելելու օրը: Նախատեսվում է նաև անձը հաստատող փաստաթղթի տրամադրման կամ մերժման վերաբերյալ էլեկտրոնային ծանուցման համակարգ:
- Էական է անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման գործընթացում պետություն-մասնավոր գործընկերության մեխանիզմի ներդրումը: Մասնավոր գործընկերոջը պատվիրակվելու են դիմումների ընդունման, փաստաթղթերի և կենսաչափական տվյալների հավաքագրման ու մշակման, փաստաթղթերի տպագրման և տրամադրման գործառույթներ: Միաժամանակ փաստաթղթի տրամադրման կամ մերժման վերաբերյալ որոշման կայացումը մնում է իրավասու պետական մարմնի բացառիկ իրավասության ներքո:
- Օրենքով սահմանվում է նաև մասնավոր գործընկերոջ գործողությունների և անգործության բողոքարկման հատուկ ընթացակարգ: Դիմողը կարող է մեկամսյա ժամկետում ոչ գույքային պահանջով բողոք ներկայացնել լիազոր մարմին, որը պարտավոր է այն քննել երկու ամսվա ընթացքում: Լիազոր մարմնի որոշումը պարտադիր է մասնավոր գործընկերոջ համար, իսկ բողոքը մերժելու կամ մասնակի բավարարելու մասին որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան: Մասնավոր գործընկերոջ գործողությունների կամ անգործության հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման լիազոր մարմնի կողմից՝ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման կանոններով:
- Բացի այդ, նոր օրենքով նախատեսվում է հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիներին հատուկ անձնագրի փոխարեն տրամադրել համապատասխան նշումով կացության քարտ:

Նախկինում տրամադրված հատուկ անձնագրերը շարունակում են գործել կարգավիճակի գործողության ամբողջ ընթացքում, իսկ նախկինում տրամադրված մյուս անձը հաստատող փաստաթղթերը՝ մինչև դրանց վավերականության ժամկետի ավարտը՝ օրենքով սահմանված բացառություններով:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-319-Ն օրենք (ընդունված՝ 03.07.2026թ., ուժի մեջ՝ 18.10.2026թ.)

- Նոր կարգավորումներով սահմանվել են կադաստրային քարտեզներում անշարժ գույքի միավորների վերաբերյալ սխալների ուղղման, ինչպես նաև կադաստրային թաղամասում ընդգրկված անշարժ գույքի միավորների իրավունքների պետական գրանցման վերանայման ընթացակարգերը:
- Նոր 34.1-ին հոդվածով սահմանվում են կադաստրային քարտեզում անշարժ գույքի միավորի սխալի հասկացությունը և դրա ուղղման կարգը: Կարգավորումն ընդգրկում է անշարժ գույքի միավորի՝ կադաստրային քարտեզում չարտացոլվելու կամ սխալ տեղադիրքով արտացոլվելու, ինչպես նաև գծային չափերի, մակերեսի, երկրաչափական տեսքի, նպատակային և գործառնական նշանակության ու սեփականության սուբյեկտի վերաբերյալ տվյալների սխալ արտացոլման դեպքերը, որոնք առաջացել են պետական գրանցման ժամանակ գույքի փաստացի իրավիճակին կամ գրանցման հիմք հանդիսացած փաստաթղթերին չհամապատասխանելու հետևանքով: Սխալների ուղղման համար որակավորված անձի կազմած հատակագծի հետ մեկտեղ ներկայացվում է եզրակացություն՝ հայտնաբերված սխալի, դրա ուղղման և այլ անշարժ գույքի միավորների սեփականատերերի, իսկ գրանցված գրավի իրավունքի առկայության դեպքում՝ նաև գրավառուների համաձայնությունների անհրաժեշտության վերաբերյալ:
- Նոր կարգավորմամբ սահմանվում են նաև դեպքեր, երբ կադաստրային քարտեզում սխալի ուղղումը կարող է իրականացվել առանց սահմանակից հողամասերի սեփականատերերի համաձայնության: Մասնավորապես, նման հնարավորություն նախատեսվում է, եթե ուղղվող սահմանը համընկնում է մինչև իրավունքների առաջին պետական գրանցման նպատակով իրականացված կադաստրային քարտեզագրումը կառուցված շենքերի և շինությունների սահմանի հետ, և օրթոֆոտոհատակագծերի հետ համադրման ու ակնադիտական ուսումնասիրության արդյունքում սահմանների անհամապատասխանություններ չեն հայտնաբերվում:
- Եթե սխալի ուղղման արդյունքում փոփոխվում են պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող սահմանակից հողամասերի տվյալները, համապատասխան հատակագիծը ենթակա է համաձայնեցման համայնքի ղեկավարի կամ իրավասու պետական մարմնի հետ: Համաձայնությունը տրամադրվում կամ մերժվում է համաձայնեցման ներկայացմանը հաջորդող օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում՝ բացառապես պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասին սահմանակից հատվածի մասով: Նշված ժամկետում համաձայնություն կամ մերժում չտրամադրելու դեպքում համաձայնությունը համարվում է տրված, և կադաստրային քարտեզը ենթակա է ուղղման, եթե օրթոֆոտոհատակագծերի հետ համադրման և գրասենյակային պայմաններում ակնադիտական ուսումնասիրության արդյունքում տվյալների կամ սահմանների անհամապատասխանություններ չեն հայտնաբերվում: Սակայն այս կարգավորումը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ անշարժ գույքի միավորի սահմանները համընկնում են կադաստրային քարտեզում համայնքի վարչական սահմանների հետ. նման դեպքերում ուղղումը կարող է իրականացվել բացառապես համապատասխան լիազոր մարմնի համաձայնությամբ:

- Նախատեսվում է նաև կադաստրային քարտեզի սխալների ուղղման հատուկ վարչական վարույթ, մասնավորապես՝ այն դեպքերի համար, երբ ուղղման արդյունքում փոփոխվում է այլ անձի անշարժ գույքը, սակայն բացակայում է սեփականատիրոջ կամ գրավառուի համաձայնությունը, այդ թվում՝ երբ համայնքը կամ պետական լիազոր մարմինը մերժել է համաձայնեցումը, կամ առկա են մակերեսի, նպատակային և գործառնական նշանակության, սեփականության սուբյեկտի կամ տեղադիրքի վերաբերյալ անհամապատասխանություններ: Վարույթը հարուցվում է սեփականատիրոջ կամ իրավատիրոջ դիմումով: Վարչական վարույթի ժամկետը 40 օր է՝ ևս 20 օրով երկարաձգելու հնարավորությամբ, իսկ դրա համար սահմանված ծառայության վճարը կազմում է 30,000 ՀՀ դրամ:
- Առանձին կարգավորում է նախատեսվում նաև այն դեպքերի համար, երբ սխալի ուղղման արդյունքում մեծանում է անշարժ գույքի միավորի մակերեսը: Եթե մակերեսի սխալը հիմնավորվում է կադաստրային գործում առկա՝ պետական գրանցման հիմք հանդիսացած բնօրինակ իրավահաստատող փաստաթղթերով, ուղղումը կարող է իրականացվել մեծացվող մակերեսի շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը վճարելու դեպքում: Վճարման պահանջից նախատեսված են բացառություններ, մասնավորապես՝ պետական կամ համայնքային սեփականությունից ֆիզիկական անձանց անհատույց սեփականության իրավունքով փոխանցված՝ օրենքով սահմանված որոշ հողամասերի համար:
- Նոր 34.2-րդ հոդվածով ներդրվում է կադաստրային թաղամասում ընդգրկված անշարժ գույքի միավորների իրավունքների պետական գրանցման վերանայման հնարավորություն՝ դրանց փաստացի օգտագործման հիմքով: Մասնավորապես, եթե կառուցապատված կամ պարսպապատված անշարժ գույքի միավորները փաստացի օգտագործվում են պետական գրանցման հիմք հանդիսացած և գրանցման արդյունքում ստեղծված փաստաթղթերին չհամապատասխանող սահմաններով կամ տեղադիրքով, և այդ անհամապատասխանությունը հիմնավորվում է ամբողջ կադաստրային թաղամասի համար ներկայացված օրթոֆոտոհատակագծերի, կադաստրային քարտեզի և անհրաժեշտության դեպքում իրականացված ուսումնասիրության արդյունքներով, անշարժ գույքի պետական ռեգիստրը կարող է վարչական վարույթի շրջանակում վերանայել տվյալ թաղամասում ընդգրկված բոլոր անշարժ գույքի միավորների իրավունքների պետական գրանցումները: Վերանայումն իրականացվում է բացառապես համապատասխան կադաստրային թաղամասի սահմաններում:
- Գրանցման վերանայման արդյունքում հողամասի մակերեսի նվազման դեպքում նախատեսվում է համայնքի կողմից դրամական փոխհատուցում՝ նվազած մակերեսի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի չափով: Իսկ մակերեսի մեծացման դեպքում սեփականության իրավունքը գրանցվում է պայմանով, որ հողամասի սեփականատիրոջ փոփոխության դեպքում ձեռք բերողը, անկախ ձեռքբերման հատուցելի կամ անհատույց բնույթից, համայնքային բյուջե վճարի մեծացված մակերեսի՝ վճարման պահին գործող շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը: Ընդ որում, մակերեսի մեծացման դեպքում գրանցման վերանայումը թույլատրվում է միայն այն պայմանով, որ դրա հետևանքով չի նվազում այլ անշարժ գույքի միավորի մակերեսը, կամ առկա է նվազեցվող մակերեսով անշարժ գույքի միավորի սեփականատիրոջ կամ իրավատիրոջ գրավոր համաձայնությունը:

ՍՊԱՍՎՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ (առաջին ընթերցում՝ 26.10.2026 թ.)

- Նախագծով առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքում կատարել մի շարք փոփոխություններ և լրացումներ՝ ուղղված ընտանեկան և կենցաղային բռնության համար քրեական պատասխանատվության կարգավորումների ընդլայնմանը և տուժած անձանց պաշտպանության ամրապնդմանը:
- Մասնավորապես, առաջարկվում է Օրենսգրքում սահմանել «ընտանեկան և կենցաղային բռնություն» հասկացությունը՝ ներառելով ընտանիքի անդամի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից կատարված համապատասխան հանցագործությունները: Միաժամանակ նախատեսվում է ընդլայնել «ընտանիքի անդամ» հասկացության շրջանակը և Օրենսգրքի մի շարք դրույթներում «մերձավոր ազգական» եզրույթը փոխարինել «ընտանիքի անդամ» եզրույթով:
- Նախագծով նախատեսվում է Օրենսգիրքը լրացնել հինգ նոր գլուխներով, որոնցով առանձին քրեական պատասխանատվություն է սահմանվելու ընտանեկան և կենցաղային հարաբերություններում կյանքի, առողջության, ազատության, պատվի, արժանապատվության, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, ինչպես նաև սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների համար:
- Նոր հանցակազմեր են նախատեսվում, մասնավորապես, ընտանիքի անդամի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ նկատմամբ հոգեկան և ֆիզիկական ներգործության, հետամտման, ամուսնությանը, ամուսնալուծությանը կամ երեխա ունենալուն հարկադրելու, ինչպես նաև սեքսուալ բնույթի բռնի գործողությունների և հարկադրանքի համար: Ընդ որում, հետամտման հանցակազմն ընդգրկում է նաև տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով պարբերաբար իրականացվող անցանկալի հաղորդակցությունը՝ օրենքի նախագծով սահմանված համապատասխան հետևանքների առաջացման պայմանով:
- Բացի այդ, առաջարկվում է ընտանեկան և կենցաղային բռնություն կատարած անձանց նկատմամբ որպես անվտանգության միջոց սահմանել ռեաբիլիտացիոն ծրագիր անցնելու պարտականություն՝ 6 ամսից մինչև 2 տարի ժամկետով: Ծրագրի տևողությունը դատարանը որոշելու է հոգեբան-փորձագետի և սոցիալական աշխատող-փորձագետի համատեղ եզրակացության հիման վրա: Նշված անվտանգության միջոցի նշանակումը նախատեսվում է պարտադիր՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտյալը դատավճռի կայացման կամ որոշման ընդունման պահին արդեն անցնում է կամ անցել է համապատասխան ռեաբիլիտացիոն ծրագիր:
- Ռեաբիլիտացիոն ծրագիր անցնելու պարտականության կատարումից հրաժարվելու կամ խուսափելու դեպքում նախատեսվում է անվտանգության միջոցը փոխարինել երկու ամիս ժամկետով կարճաժամկետ ազատազրկմամբ: Ընդ որում, պարտականության կատարումից խուսափում է համարվում դատարանի կողմից անձի վրա դրված պարտականությունը երկու և ավելի անգամ չկատարելը: Ռեաբիլիտացիոն ծրագրի պարտականությունը սահմանող նոր 120.1-ին հոդվածի ուժի մեջ մտնելը նախատեսվում է 2028 թվականի հուլիսի 1-ից:

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ (առաջին ընթերցում՝ 28.10.2026 թ.)

- Նախատեսվում է հատուկ պաշտպանության միջոցների կիրառումն ապահովել էլեկտրոնային հսկողության միջոցների օգտագործմամբ՝ Կառավարության սահմանած կարգով: Միաժամանակ, վարույթն իրականացնող մարմնի կողմից կիրառվող պաշտոնական նախազգուշացման շրջանակում կարող է սահմանվել պաշտպանվող անձին որոշակի հեռավորությունից ավելի չմոտենալու պահանջ:

Եթե պաշտպանվող անձը և ենթադրյալ հանցանք կատարած անձը համատեղ են բնակվում, ապա վերջինս պետք է նախազգուշացվի համատեղ բնակության վայրից անհապաղ հեռանալու և մինչև քրեական հետապնդում հարուցելու կամ չհարուցելու մասին որոշման ընդունումն այնտեղ վերադառնալու արգելքի վերաբերյալ:

- Նախագծով սահմանվում է նաև, որ ընտանեկան և կենցաղային բռնության հատկանիշներով հանցանքի վերաբերյալ վարույթում մեղադրյալի նկատմամբ տնային կալանք չի կարող կիրառվել, եթե մեղադրյալն ու տուժողը համատեղ են բնակվում, և վարույթի ընթացքում հնարավոր չէ ապահովել նրանցից որևէ մեկի մշտական բնակությունն այլ վայրում:
- Բացի այդ, նախատեսվում է, որ ընտանեկան և կենցաղային բռնության հատկանիշներով հանցանքի վերաբերյալ վարույթում տուժողը, որպես կանոն, հարցաքննվում է մեկ անգամ: Տուժողը կարող է հրաժարվել լրացուցիչ հարցաքննությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ այն անհրաժեշտ է առաջին հարցաքննությունից հետո վարույթն իրականացնող մարմնին հայտնի դարձած հանգամանքների պարզաբանման համար:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 1946-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության N 1418-Ն որոշում (ընդունված՝ 01.10.2026 թ., ուժի մեջ՝ ՀՕ-84-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից)

- Որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքների՝ վթարի կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով ոչնչացման կամ անվերադարձ կորստի, ինչպես նաև փոխադրման կամ պահպանման բնականոն պայմաններում բնական կորստի հետևանքով անվերադարձ կորստի փաստը մաքսային մարմինների կողմից ճանաչելու կարգում: Մասնավորապես, փոփոխությունների արդյունքում նշված կարգավորումների կիրառման շրջանակը տարածվում է նաև էլեկտրոնային առևտրի ապրանքների նկատմամբ՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքում ՀՕ-84-Ն օրենքով կատարված փոփոխություններին համապատասխան:

ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 16-ի N 956-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության N 1411-Ն որոշում (ընդունված՝ 01.10.2026 թ., ուժի մեջ՝ 02.10.2026 թ.)

- Որոշմամբ նախատեսվել են սոցիալական ծախսերի փոխհատուցման հատուկ մեխանիզմներ այն ֆիզիկական անձանց համար, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ օրենսդրությամբ համարվում է սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն:
- Նախատեսվել է, որ գործատուն մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացնում տվյալ անձանց՝ հաշվետու տարվա ընթացքում հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների, քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների կամ մատուցված ծառայությունների դիմաց ստացվող եկամուտների, ինչպես նաև դրանցից հաշվարկված և պետական բյուջե վճարված եկամտային հարկի գումարների վերաբերյալ տեղեկատվություն: Ներկայացված տվյալների հիման վրա սոցիալական ծախսերի փոխհատուցումն իրականացվում է հարկային մարմնի կողմից՝ ընդհանուր կարգով:

- Միաժամանակ, օրենսդրությամբ գաղտնիք համարվող հարկվող եկամուտներից հաշվարկված և վճարված եկամտային հարկի մասով նախատեսվել է փոխհատուցման այլընտրանքային մեխանիզմ՝ համապատասխան հարկային գործակալի միջոցով:
  Այս դեպքում ֆիզիկական անձը հարկային գործակալին ներկայացնում է սահմանված ձևի դիմում-հայտարարություն՝ կցելով եկամտային հարկի տարեկան հայտարարագիրը և սոցիալական ծախսը հիմնավորող հաշվարկային փաստաթղթերը:
- Դիմում-հայտարարությունն ստանալուց հետո հարկային գործակալը հաշվարկում է սոցիալական ծախսերի փոխհատուցման ենթակա գումարը՝ դրանից նվազեցնելով նույն հաշվետու տարվա համար հարկային մարմնի կողմից ֆիզիկական անձի միասնական հաշվին արդեն մուտքագրված փոխհատուցման ենթակա գումարները: Դրական տարբերության առկայության դեպքում հարկային գործակալը համապատասխան գումարը ֆիզիկական անձին վճարում է առաջիկա աշխատավարձի հետ միասին:
- Որոշման դրույթները տարածվում են 2025 թվականի հաշվետու տարվա և դրան հաջորդող հաշվետու տարիների ընթացքում կատարված սոցիալական ծախսերի վրա:

ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 21-ի N 1299-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին ՀՀ կառավարության N 1403-Ն որոշում (ընդունված՝ 01.10.2026 թ., ուժի մեջ՝ 02.10.2026 թ.)

- ՀՀ որոշմամբ նոր խմբագրությամբ են սահմանվել չափանմուշը որպես ազգային չափանմուշ ճանաչելու չափագիտական և տեխնիկական պահանջները, այդ թվում՝ չափագիտական բնութագրերի, ճշտության, չափագիտական հետևելիության և միջազգային համադրելիության վերաբերյալ չափանիշները:
  Ազգային չափանմուշի ճանաչման համար դիմող կազմակերպությունը պետք է լինի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված իրավաբանական անձ, ունենա չափանմուշի նկատմամբ սեփականության, տիրապետման կամ օգտագործման իրավական հիմք, համապատասխան պահպանման պայմաններ, տեխնիկական միջոցներ, ինչպես նաև առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող համապատասխան կրթությամբ աշխատակից:
- Ներդրվել է ազգային չափանմուշի ճանաչման և կատարելագործման առաջարկությունների գնահատման բազմափուլ ընթացակարգ: Դիմումը ներկայացվում է չափագիտության ազգային մարմին, որի ձևավորած աշխատանքային խումբը կատարում է նախնական գնահատում: Դրական եզրակացության դեպքում նյութերը ներկայացվում են չափագիտության խորհրդին, որի գնահատման հիման վրա չափագիտության ազգային մարմինը հիմնավորված առաջարկություն է ներկայացնում չափագիտության լիազոր մարմին: Վերջինս համապատասխան իրավական ակտով որոշում է չափանմուշը որպես ազգային չափանմուշ ճանաչելու կամ դրա կատարելագործման արդյունքները հաստատելու հարցը:
- Նոր կարգավորմամբ սահմանվել են նաև ազգային չափանմուշը պահպանող կազմակերպության պարտականությունները, այդ թվում՝ չափագիտական հետևելիության շարունակական ապահովումը, պարբերական տրամաչափարկումը, չափանմուշի պահպանման և կիրառման պայմանների պահպանումը, համապատասխան փաստաթղթավորման իրականացումը: Ազգային չափանմուշների ճանաչման, պահպանման, կատարելագործման և ճանաչման դադարեցման վերաբերյալ տեղեկությունները ներառվում են չափագիտության ազգային մարմնի վարած ռեեստրում:
- Բացի այդ, սահմանվել են ազգային չափանմուշի ճանաչումը դադարեցնելու հիմքերն ու ընթացակարգը:

Մասնավորապես, ճանաչումը կարող է դադարեցվել, եթե չափանմուշն այլևս չի ապահովում սահմանված չափագիտական բնութագրերը, խախտվել է չափագիտական հետևելիությունը, անհնար է դարձել դրա հետագա կիրառումը կամ պահպանումը, կամ ստեղծվել կամ ճանաչվել է առավել բարձր ճշտությամբ այլ ազգային չափանմուշ: Ճանաչման դադարեցումը կատարվում է չափագիտության լիազոր մարմնի իրավական ակտով՝ համապատասխան գնահատման ընթացակարգի ավարտից հետո:

«Ռիելթորի մասնագիտական որակավորման քննությունների անցկացման և հանձնաժողովի անդամների ընտրության կարգը, որակավորման քննությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանք ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 1412-Ն որոշում (ընդունված՝ 01.10.2026 թ., ուժի մեջ՝ 01.11.2026 թ.)

- Որոշմամբ սահմանվել է, որ ռիելթորների մասնագիտական որակավորումն իրականացնում է Կադաստրի կոմիտեն, իսկ քննություններն անցկացվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ: Որակավորման քննությանը կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող ֆիզիկական անձինք, ինչպես նաև բարձրագույն կրթություն չունեցող այն անձինք, որոնք «Ռիելթորական գործունեության մասին» օրենքով նախատեսված անցումային կարգավորումների շրջանակում մասնակցել են համապատասխան կրթական ծրագրերի և ստացել մասնակցության հավաստագիր:
- Որակավորման քննությանը մասնակցելու համար դիմումները ներկայացվում են էլեկտրոնային եղանակով՝ e-request.am հարթակի միջոցով՝ կցելով անձը հաստատող փաստաթղթի պատճենը, լուսանկարը, կրթությունը կամ համապատասխան կրթական ծրագրին մասնակցությունը հավաստող փաստաթղթերը և պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթուղթը: Քննության մասին հայտարարությունը հրապարակվում է Կադաստրի կոմիտեի պաշտոնական կայքում՝ քննությունից առնվազն մեկ ամիս առաջ, իսկ փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը հայտարարության հրապարակմանը հաջորդող 15-րդ օրն է:
- Որոշմամբ կարգավորվել են նաև որակավորման հանձնաժողովի ձևավորման և գործունեության հարցերը: Մինչև օրենքով նախատեսված թվով որակավորված ռիելթորների առկայությունը հանձնաժողովի կազմում ընդգրկվում են լիազոր մարմնի երկու ներկայացուցիչ և ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների երեք ներկայացուցիչ, որոնք պետք է ունենան որոշմամբ սահմանված համապատասխան գիտական աստիճան:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 12-ի N 1324-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1449-Ն որոշում (ընդունված՝ 08.10.2026 թ., ուժի մեջ՝ 01.01.2027 թ.)

- Որոշմամբ էական փոփոխություններ են կատարվել օրինապահ հարկ վճարող համարելու չափանիշներում և համապատասխան հավաստագրի տրամադրման կարգում: Մասնավորապես, նոր կարգավորումներով հավաստագիր ստանալու համար նախատեսվում են նաև հետևյալ պահանջները՝
- դիտարկվող ժամանակահատվածում և դրան նախորդող երկու հարկային տարիներին գործունեության արդյունքներով անընդմեջ հարկային վնասի բացակայություն՝ առանց նախորդ տարիներից փոխանցվող հարկային վնասի հաշվառման.
- դիտարկվող ժամանակահատվածի կեսից ավելի ամիսների համար առնվազն երկու աշխատողի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների հաշվարկում, ընդ որում՝ բոլոր հաշվարկված աշխատավարձերն ու դրանց հավասարեցված վճարումները պետք է գերազանցեն նվազագույն աշխատավարձի չափը.
- դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ գործունեության համապատասխան ոլորտի համար օրենսդրությամբ պահանջվող բոլոր լիցենզիաների, արտոնագրերի և ծանուցումների առկայություն.
- դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ հարկային օրենսգրքի 407-րդ, 408-րդ և 409-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումների բացակայություն:

- Միաժամանակ, ընդլայնվել է այն հարկային և վարչական իրավախախտումների շրջանակը, որոնց առկայությունը հաշվի է առնվում օրինապահ հարկ վճարողի կարգավիճակը գնահատելիս:
  Փոփոխվել են նաև հարկային և մաքսային մարմինների կողմից արձանագրված իրավախախտումների արդյունքում հաշվարկված կամ լրացուցիչ առաջադրված պարտավորությունների թույլատրելի սահմանաչափերը: Մասնավորապես, նախկինում սահմանված ԱԱՀ-ով հարկման բազայի 0,05 տոկոսի և 4 մլն դրամի փոխարեն սահմանվել են համապատասխանաբար 0,1 տոկոս և 10 մլն դրամ սահմանաչափերը: Գնահատման շրջանակում ներառվել է նաև նվազեցված հարկային վնասը՝ դրան համարժեք շահութահարկի գումարի չափով:
- Օրինապահ հարկ վճարողի հավաստագիրը տրամադրվելու է անժամկետ, բացառությամբ լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկվելու համար տրամադրվող հավաստագրի, որի գործողության ժամկետը սահմանվում է տրամադրման օրվանից մինչև դրան հաջորդող 12-րդ ամսվա վերջին օրացուցային օրվա ավարտը:
- Անժամկետ հավաստագրերի համար ներդրվում է եռամսյակային մշտադիտարկման համակարգ: Հարկային մարմինը գնահատելու է հավաստագիր ունեցող հարկ վճարողի գործունեության համապատասխանությունը սահմանված պահանջներին՝ մշտադիտարկմանը նախորդող տարվա հունվարի 1-ից մինչև մշտադիտարկման վերջին օրը ներառող ժամանակահատվածի համար:
- Սահմանվել են նաև հավաստագրի գործողության դադարեցման հիմքերը: Մասնավորապես, հավաստագրի գործողությունը դադարեցվում է, եթե հարկ վճարողը չի բավարարում ԱԱՀ վճարող լինելու կամ ԱԱՀ-ով հարկվող գործունեության վերաբերյալ սահմանված պահանջները, ունի ժամկետանց հարկային կամ մաքսային պարտավորություններ, չի կատարում հաշվետվությունների ներկայացման կամ պարտադիր վճարումների պարտավորությունները՝ սահմանված թույլատրելի խախտումների քանակը գերազանցելով, կամ առկա են որոշմամբ նախատեսված հարկային և այլ իրավախախտումներ:
  Դադարեցման հիմքեր են նաև երեք անընդմեջ հարկային տարիներին առաջացած հարկային վնասը և աշխատողների թվաքանակի ու վարձատրության վերաբերյալ սահմանված պահանջներին չհամապատասխանելը: Ընդ որում, որոշ հիմքերի գնահատման ժամանակ հաշվի են առնվում նաև հարկ վճարողի հետ փոխկապակցված անձանց կամ իրավանախորդ կազմակերպությունների գործունեության արդյունքները:
- Մշտադիտարկումն իրականացվում է յուրաքանչյուր եռամսյակ՝ համապատասխան հարկային հաշվարկների ներկայացման վերջնաժամկետին հաջորդող օրվանից 7 աշխատանքային օրվա ընթացքում: Դադարեցման հիմքերի հայտնաբերման դեպքում կազմվում է եզրակացություն, որի հիման վրա հարկային մարմնի ղեկավարի հրամանով հավաստագրի գործողությունը դադարեցվում է հրամանին հաջորդող օրվանից: Այդ մասին հարկ վճարողը ծանուցվում է էլեկտրոնային եղանակով, իսկ հավաստագրերի գործողությունը դադարեցված հարկ վճարողների ցանկը հրապարակվում է հարկային մարմնի պաշտոնական կայքում:
- Հավաստագրի գործողության դադարեցումից հետո նոր հավաստագիր ստանալու համար հարկ վճարողը կարող է դիմել դադարեցման օրը ներառող ամսվան հաջորդող 12-րդ ամսվա 1-ից: Բացառություն է նախատեսված այն դեպքերի համար, երբ հավաստագրի գործողության դադարեցման հիմքերն օրենքով սահմանված կարգով անվավեր են ճանաչվել. այդ դեպքում նոր հավաստագրի համար հնարավոր է դիմել համապատասխան ակտն ուժի մեջ մտնելուց հետո:
- Որոշումն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից և կիրառվում է այդ ամսաթվից հետո օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ստանալու դիմում ներկայացրած՝ ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ:

«Առևտրի էլեկտրոնային հարթակը շահագործողի կողմից հարկային մարմին ներկայացվող տեղեկատվության շրջանակը, տեղեկատվության ներկայացման և այդ տեղեկատվության հասանելիության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 1462-Ն որոշում (ընդունված՝ 08.10.2026 թ., ուժի մեջ՝ 01.01.2027 թ.)

- Էլեկտրոնային հարթակների միջոցով իրականացվող անդրսահմանային էլեկտրոնային առևտրի գործարքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և հասանելիության ապահովման նպատակով սահմանվել է առևտրի էլեկտրոնային հարթակները շահագործողների կողմից հարկային մարմին տեղեկատվություն ներկայացնելու նոր կարգ:
- Կարգը տարածվում է ՀՀ հարկային օրենսգրքի 288-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմնում հաշվառված առևտրի էլեկտրոնային հարթակները շահագործողների վրա: Վերջիններս պարտավոր են հարկային մարմին ներկայացնել տեղեկատվություն իրենց հարթակների միջոցով ՀՀ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից Հայաստանի Հանրապետությունից ԵԱՏՄ անդամ այլ պետություններ արտահանված և այդ պետություններում անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մատակարարված ապրանքների վերաբերյալ:
- Ներկայացման ենթակա տեղեկատվությունը ներառում է առևտրի էլեկտրոնային հարթակը շահագործողի և ապրանք մատակարարողի նույնականացման տվյալները, հարթակի անվանումն ու ինտերնետային կայքէջի հասցեն, ապրանքների արտահանման տրանսպորտային կամ ապրանքաուղեկցող փաստաթղթերի տվյալները՝ դրանց առկայության դեպքում, ինչպես նաև ապրանքների ԱՏԳ ԱԱ ծածկագրերը՝ առնվազն 6 նիշի մակարդակով, անվանումները, նույնականացման կոդերը, քանակները, չափման միավորները, արժույթը, միավորի գինը, ընդհանուր արժեքը և ֆիզիկական անձին ապրանքը հանձնելու ամսաթիվը: Ապրանքի ընդհանուր արժեքը որոշվում է վաճառողի սահմանած գնի հիման վրա՝ հաշվի առնելով նրա կողմից տրամադրված զեղչերը:
- Միաժամանակ, նախատեսվում է հարկային մարմին ներկայացնել նաև վերադարձված ապրանքների կամ վճարված ապրանքներից գնորդների հրաժարման վերաբերյալ տեղեկություններ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունից արտահանված ապրանքների հետներմուծման դեպքերում: Ներկայացվում են վերադարձվող ապրանքի նույնականացման, քանակական և արժեքային տվյալները, առկայության դեպքում՝ արտահանման փաստաթղթերի տվյալները, ինչպես նաև վերադարձի կամ ապրանքից հրաժարվելու ամսաթիվը:
- Տեղեկատվությունը ներկայացվում է յուրաքանչյուր ամսվա համար՝ ոչ ուշ, քան հաջորդ ամսվա 20-ը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 1-ի N 864-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 1477-Ն որոշում (ընդունված՝ 15.10.2026 թ., ուժի մեջ՝ 16.10.2026 թ.)

- ՀՀ կառավարության 2026 թվականի հոկտեմբերի 15-ի N 1477-Ն որոշմամբ ընդլայնվել են միասնական հաշվում կամ վարչական ակտի միասնական հաշվում առկա գումարներն այլ հաշվին վերադարձնելու հնարավորությունները: Մասնավորապես, նախատեսվել է, որ պետական կառավարման համակարգի մարմիններին համապատասխան գումարների վերադարձը կարող է իրականացվել նաև նրանց գանձապետական հաշիվներին:
- Որոշման գործողությունը տարածվում է 2023 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Ժամանակավոր պահպանության հանձնված և «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված էլեկտրոնային առևտրի ապրանքների առանձնացված հաշվառման վերաբերյալ հաշվետվության ձևը, հաշվետվության՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեին ներկայացման կարգը, ժամկետը և պարբերականությունը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 1490-Ն որոշում (ընդունված՝ 15.10.2026 թ., ուժի մեջ՝ 2026 թվականի մարտի 4-ի ՀՕ-84-Ն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 90-րդ օրը)

- Որոշմամբ սահմանվել է, որ էլեկտրոնային առևտրի օպերատորները պարտավոր են

ներկայացնել առանձին հաշվառման տվյալներ ժամանակավոր պահպանության հանձնված և «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների վերաբերյալ: Հաշվետվությունը ներառում է հաշվետու ժամանակաշրջանի սկզբի և վերջի դրությամբ ապրանքների մնացորդները, ժամանակաշրջանի ընթացքում մուտքագրված, դուրս բերված, ֆիզիկական անձանց մատակարարված և վերադարձված ապրանքների վերաբերյալ տեղեկությունները՝ ներառյալ ապրանքների ԱՏԳ ԱԱ ծածկագրերը, անվանումները, քանակները և համապատասխան մաքսային փաստաթղթերի տվյալները:

- Հաշվետվությունները ներկայացվում են կիսամյակային պարբերականությամբ՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ մաքսային հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով: Մինչև համակարգի գործարկումը հաշվետվությունները ներկայացվում են էլեկտրոնային փոստով, իսկ անհաղթահարելի ուժի հետևանքով էլեկտրոնային ներկայացման անհնարինության դեպքում՝ թղթային եղանակով՝ համապատասխան էլեկտրոնային օրինակները հետագայում ներկայացնելու պարտավորությամբ:
- Բացի այդ, անկախ կիսամյակային հաշվետվությունների ներկայացման պարբերականությունից, մաքսային հսկողության անհրաժեշտության դեպքում ՊԵԿ-ը կարող է պահանջել հաշվետվություն որոշակի ժամանակահատվածի համար՝ նշելով հարցման իրավական հիմքն ու անհրաժեշտության հիմնավորումը: Այդ դեպքում հաշվետվությունը ներկայացվում է մինչև հարցումը ստանալու ամիսը հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: Հաշվետվությունները սահմանված ժամկետում չներկայացնելը կամ թերի ներկայացնելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

«Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանվող էլեկտրոնային առևտրի ապրանքների՝ առանց «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի կիրառման փոխադրման դեպքերն ու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 1483-Ն որոշում (ընդունված՝ 15.10.2026 թ., ուժի մեջ՝ ՀՕ-84-Ն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 90-րդ օրը)

- Որոշմամբ նախատեսվել է. որ էլեկտրոնային առևտրի ապրանքները կարող են փոխադրվել առանց «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի կիրառման, եթե էլեկտրոնային առևտրի օպերատորը հանդիսանում է լիազորված տնտեսական օպերատոր, օրինապահ հարկ վճարող կամ ունի օրինապահության հավաստագիր, ինչպես նաև այն դեպքերում, երբ ապրանքներն արտահանվում են միջազգային փոստային առաքումներով: Ընդ որում, համապատասխան վկայականի կամ հավաստագրի կասեցման դեպքում օպերատորի կարգավիճակով պայմանավորված արտոնությունը չի կիրառվում, և ապրանքները պետք է փոխադրվեն «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով:
- Առանց մաքսային տարանցման ապրանքների փոխադրման համար նախատեսվում է մաքսային մարմնի թույլտվության ստացման ընթացակարգ: Էլեկտրոնային առևտրի օպերատորը համապատասխան դիմումը և ապրանքներն ուղեկցող փաստաթղթերը ներկայացնում է մաքսային հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով: Փաստաթղթերի ոչ ամբողջական ներկայացման դեպքում օպերատորին տրամադրվում է մեկ աշխատանքային օր՝ դրանք լրացնելու համար: Սահմանված պահանջների չպահպանման դեպքում առանց մաքսային տարանցման փոխադրման թույլտվությունը մերժվում է, և ապրանքները ենթակա են փոխադրման ընդհանուր՝ «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 355-L որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 1502-L որոշում (ընդունված՝ 15.10.2026 թ., ուժի մեջ՝ 25.10.2026 թ.)

- Որոշմամբ փոփոխություններ են կատարվել տնտեսության արդիականացմանն ուղղված արտադրողականության խթանման նպատակային ծրագրում՝ վերանայելով պետական սուբսիդավորմամբ վարկերի և լիզինգի պայմանները, վերաֆինանսավորման ընթացակարգերը և ֆինանսավորման ենթակա նպատակների շրջանակը:
- Մասնավորապես, հստակեցվել է, որ ծրագրի յուրաքանչյուր շահառու կարող է մեկ անգամ վերաֆինանսավորել մեկ կամ մի քանի գործող վարկային պարտավորություն՝ դրանք մեկ կամ մի քանի ֆինանսական կազմակերպություններից այլ ֆինանսական կազմակերպություն տեղափոխելով: Վերաֆինանսավորման արդյունքում պետական սուբսիդավորումը շարունակվում է նախկինում կիրառված չափով և մնացած ժամկետով՝ առանց սուբսիդավորման չափի ավելացման կամ ժամկետի երկարաձգման: Նոր վարկերի ընդհանուր գումարը չի կարող գերազանցել տեղափոխվող պարտավորությունների մնացորդային մայր գումարը: Միաժամանակ, սահմանվել է ֆինանսական կազմակերպությունների պատասխանատվության տարանջատում. մինչև վերաֆինանսավորումը կատարված խախտումների համար պատասխանատու է սկզբնական ֆինանսական կազմակերպությունը, իսկ դրանից հետո կատարվածների համար՝ նորը:
- Առանձին արտոնյալ պայմաններ են նախատեսվել արևային կամ ֆոտովոլտային կայանների արտադրած էլեկտրաէներգիայի կուտակման համար օգտագործվող էլեկտրական կուտակիչների (ակումուլյատորների) և դրանց բաղկացուցիչ մասերի ֆինանսավորման համար: Դրանց վարկերի և լիզինգի տոկոսադրույքների սուբսիդավորման ժամկետը սահմանվել է մինչև 84 ամիս: Դրամային վարկերի և լիզինգի դեպքում սուբսիդավորման չափերը համապատասխանաբար կազմում են 8% և 10%, իսկ արտարժութային ֆինանսավորման դեպքում՝ 6% և 8%: Միաժամանակ, ծրագրի շրջանակում ֆինանսավորման ենթակա չեն արևային կամ ֆոտովոլտային կայանների կառուցման, վերակառուցման, արդիականացման, ընդլայնման կամ հզորության ավելացման համար ձեռք բերվող մեքենասարքավորումները, այդ թվում՝ արևային պանելները, ինվերտորները և կայանների տեխնոլոգիական գործընթացն ապահովող այլ բաղադրիչները:
- Վերանայվել են նաև ֆինանսավորման առավելագույն սահմանաչափերն ու սուբսիդավորման դրույքաչափերը: Մեքենասարքավորումների ձեռքբերման և հյուրանոցային տնտեսության համապատասխան օբյեկտների կառուցման կամ վերակառուցման համար նախատեսվել է մինչև 1 մլրդ դրամի, իսկ բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովման և արտադրողականության խորհրդատվության համար՝ մինչև 400 մլն դրամի ֆինանսավորման սուբսիդավորվող մաս: Կապիտալ շինարարության դեպքում սահմանաչափը կազմում է ձեռք բերված մեքենասարքավորումների արժեքի 30%-ը:
- Սահմանվել է նաև, որ ծրագրով ձեռք բերված մեքենասարքավորումները սուբսիդավորման ամբողջ ժամանակահատվածում պետք է օգտագործվեն բացառապես ֆինանսավորման հայտով նախատեսված տնտեսական գործունեության և նպատակների շրջանակում: Դրանց օտարումը, վարձակալության հանձնումը կամ այլ անձանց տիրապետման կամ օգտագործման փոխանցումն արգելվում է՝ բացառությամբ ծրագրով նախատեսված լիզինգի և վարձույթի ու լիզինգի ոլորտում գործունեություն իրականացնող շահառուների համար սահմանված դեպքերի:
- Բացի այդ, նախատեսվել է ծրագրի շրջանակում տրամադրված վարկերի և լիզինգի վերաբերյալ տեղեկությունների փոխանցման հնարավորություն Պետական վերահսկողական ծառայությանը՝ վերջինիս օրենքով վերապահված լիազորությունների իրականացման նպատակով: Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցումը պայմանավորված է տնտեսավարողի գրավոր թույլտվությամբ, որի տրամադրումը ծրագրին մասնակցության պարտադիր պայման է:

- Անցումային կարգավորմամբ նախատեսվել է, որ մինչև որոշման ուժի մեջ մտնելը կնքված պայմանագրերով տրամադրված, ինչպես նաև ֆինանսական կազմակերպությունների կողմից արդեն հաստատված, սակայն դեռևս չտրամադրված վարկերի և լիզինգի նկատմամբ պահպանվում են դրանց հաստատման պահին գործող պայմանները:

«Օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններին ֆինանսական հաշիվների մասին տեղեկության փոխանցման, հարկային մարմնի կողմից այդպիսի իրավասու մարմիններից տեղեկության ստացման կարգերը, ինչպես նաև փոխանցված ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների պահպանության պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 1522-Ն որոշում (ընդունված՝ 22.10.2026 թ., ուժի մեջ՝ 01.11.2026 թ.)

- Որոշմամբ նոր կարգավորումներ են սահմանվել Հայաստանի Հանրապետության հարկային մարմնի և օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների միջև ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման, ստացման և պահպանության համար: Միաժամանակ, ուժը կորցրած է ճանաչվել նույն հարաբերությունները կարգավորող՝ ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 5-ի N 718-Ն որոշումը:
- Սահմանվել է, որ հարկային մարմինը ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունները փոխանցում է այն պետություններին, որոնք ներառված են հարկային մարմնի հրապարակած՝ տեղեկությունների ավտոմատ փոխանակում իրականացնող պետությունների ցանկում: Փոխանակումն իրականացվում է ՏՀԶԿ-ի Միասնական հաշվետվողական ստանդարտի (Common Reporting Standard, CRS) և համապատասխան միջազգային համաձայնագրերի հիման վրա՝ ընդգրկելով տվյալ պետությունների հարկային ռեզիդենտ հանդիսացող հաշվետերերի և վերահսկող անձանց վերաբերյալ տեղեկությունները:
- Տեղեկությունների փոխանցման համար սահմանվել է տարեկան վերջնաժամկետ՝ սեպտեմբերի 30-ը:

Հարկային մարմինը յուրաքանչյուր ստացող պետության համար ձևավորում է առանձին տվյալների փաթեթ, իրականացնում դրա տեխնիկական վավերացում, գաղտնագրում և փոխանցում անվտանգ միասնական համակարգի միջոցով: Տվյալների մերժման կամ սխալների հայտնաբերման դեպքում նախատեսվում է դրանց ճշգրտման և կրկնակի փոխանցման ընթացակարգ:

- Կարգավորվել է նաև օտարերկրյա իրավասու մարմիններից ստացվող ֆինանսական տեղեկությունների մշակումը: Մասնավորապես, հարկային մարմինը ստացված տվյալների փաթեթները գաղտնազերծում է, ստուգում դրանց ամբողջականությունն ու համապատասխանությունը սահմանված տեխնիկական պահանջներին և 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան պետությանը հաղորդում տվյալների ընդունման կամ մերժման և հայտնաբերված սխալների մասին:
- Բացի այդ, հաստատվել են փոխանցված և ստացված ֆինանսական տեղեկությունների պահպանության պահանջները: Նախատեսվում է դրանց պահպանում առնվազն հինգ տարի, ինչպես նաև գաղտնիության, անձնական տվյալների պաշտպանության և տեղեկատվական անվտանգության ապահովման պարտադիր միջոցներ, այդ թվում՝ տվյալների գաղտնագրում, թվային ստորագրում և ուղարկողի ինքնության ստուգում:
- Նախագծերով նախատեսվում է, որ համապատասխան օրենքներն ուժի մեջ են մտնելու պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից վեց ամիս հետո:

«Մի շարք ապրանքների պայմանական բացթողման կարգը և դեպքը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 1550-Ն որոշում (ընդունված՝ 29.10.2026 թ., ուժի մեջ՝ 30.10.2026 թ.)

- Որոշմամբ սահմանվել է ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի որոշ տեսակների պայմանական բացթողման նոր կարգ, որը հնարավորություն է տալիս համապատասխան ներմուծողներին վառելիքը «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով պայմանականորեն բաց թողնել՝ առանց մաքսային մարմնին ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգով (TP TC 013/2011) նախատեսված համապատասխանության գնահատման փաստաթուղթը նախապես ներկայացնելու:
- Նոր կարգը կիրառվում է այն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ, որոնք մաքսային հայտարարագրի գրանցմանը նախորդող օրացուցային տարում կամ հայտարարագրի գրանցման տարվա սկզբից մինչև դրա գրանցմանը նախորդող օրը Հայաստանի Հանրապետություն ներմուծել և «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով հայտարարագրել են ավելի քան 16 800 տոննա համապատասխան բենզին կամ դիզելային վառելիք: Կարգավորումը վերաբերում է երկաթուղային կամ ավտոմոբիլային տրանսպորտով հեղուկ վիճակում ներմուծվող վառելիքին:
- Պայմանական բացթողումն իրականացվում է ներմուծողի՝ մաքսային հայտարարագրման էլեկտրոնային համակարգով ներկայացված դիմումի հիման վրա: Համապատասխանության գնահատման փաստաթուղթը պետք է ներկայացվի ապրանքների բացթողման օրվան հաջորդող տասներորդ օրվանից ոչ ուշ: Մինչև փաստաթղթի ներկայացումը և մաքսային մարմնի կողմից պայմանական բացթողման ավարտի հաստատումը ապրանքները պահպանում են օտարերկրյա ապրանքի կարգավիճակը և գտնվում են մաքսային հսկողության ներքո: Այդ ընթացքում արգելվում է դրանց վաճառքը, այլ անձանց փոխանցումը կամ ցանկացած ձևով օգտագործումը՝ օրենքով նախատեսված պատասխանատվության սպառնալիքով:
- Եթե սահմանված ժամկետում համապատասխանության գնահատման փաստաթուղթը չի ներկայացվում կամ ներկայացվում է թերի կամ ոչ ճշգրիտ փաստաթուղթ, ապրանքները շարունակում են պահպանել օտարերկրյա ապրանքի կարգավիճակը և փաստաթղթի ներկայացման ժամկետի ավարտին հաջորդող հինգ օրվա ընթացքում ենթակա են «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպման: Ընդ որում, եթե պայմանական բաց թողնված ապրանքները պահեստավորվել են նույնանման ապրանքների այլ խմբաքանակների հետ մեկ ընդհանուր տարայում, վերաարտահանման ենթակա է այդ տարայում պահպանվող ապրանքների ամբողջ խմբաքանակը:
- Որոշումը կիրառվում է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ գրանցված մաքսային հայտարարագրերով հայտարարագրված ապրանքների նկատմամբ:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1257-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության N 1560-Ն որոշում (ընդունված՝ 29.10.2026 թ., ուժի մեջ՝ 01.01.2027 թ.)

- Որոշմամբ լրացվել է հաշվարկային փաստաթղթերի անվավեր ճանաչման և չեղարկման կարգը՝ սահմանելով չեղարկված հարկային հաշվի փոխարեն նոր հարկային հաշիվ դուրս գրելու ընթացակարգ:
- Մասնավորապես, ՀՀ հարկային օրենսգրքի 56-րդ հոդվածի 10-րդ մասի 4-6-րդ կետերով նախատեսված դեպքերում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նույն գործարքի մասով նոր հարկային հաշիվ կարող է դուրս գրվել նախկին հարկային հաշիվը սահմանված կարգով չեղարկված համարվելուց հետո:
- Նոր հարկային հաշվում պարտադիր նշվում են չեղարկված հարկային հաշվի սերիան, համարը և դուրսգրման ամսաթիվը:

Միաժամանակ, անկախ նոր հարկային հաշվի դուրսգրման ամսաթվից, դրանում պահպանվում է սկզբնական հարկային հաշվում նշված՝ ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման ամսաթիվը, ինչպես նաև արտացոլվում են ապրանքների անվանացանկի ու քանակի կամ աշխատանքների և ծառայությունների տեսակի ու ծավալի վերաբերյալ պարտադիր տվյալները:

«Ապրանքի ծագման հավաստագրերի տրամադրման և փորձաքննության անցկացման կարգը, փորձաքննության մարմիններին ներկայացվող պահանջները և փորձագետների որակավորման ու քննության անցկացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 1577-Ն որոշում (ընդունված՝ 29.10.2026 թ., ուժի մեջ՝ 01.01.2027 թ.)

- Որոշմամբ հաստատվել են ապրանքի ծագման հավաստագրերի տրամադրման և փորձաքննության անցկացման նոր կարգը, ինչպես նաև փորձաքննության մարմինների և փորձագետների որակավորման պահանջները: Ապրանքի ծագման հավաստագրերի տրամադրման լիազոր մարմին է սահմանվել ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը: Նախատեսվել է, որ արտադրության մշտական անվանացանկի համար կազմված փորձաքննության ակտը գործում է անժամկետ, քանի դեռ չեն փոփոխվել ապրանքի ծագման որոշման վրա ազդող արտադրական պայմանները: Նման փոփոխությունների մասին դիմողը պարտավոր է տեղեկացնել փորձաքննության մարմնին երեք աշխատանքային օրվա ընթացքում: Միաժամանակ, որոշ ապրանքների, այդ թվում՝ սահմանված գյուղատնտեսական ապրանքատեսակների համար նախատեսվել է ծագման հավաստագրի տրամադրում առանց փորձաքննության:
- Սահմանվել են փորձաքննության և հավաստագրերի տրամադրման հստակ ժամկետներ ու վճարներ: Փորձաքննությունն իրականացվում է անհրաժեշտ փաստաթղթերն ամբողջությամբ ներկայացնելուց կամ թերությունները վերացնելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ լրացուցիչ ուսումնասիրությունների անհրաժեշտության դեպքում մինչև երեք աշխատանքային օրով երկարաձգելու հնարավորությամբ: Հայաստանի Հանրապետությունում արտադրված ապրանքների ծագման փորձաքննության և փորձաքննության ակտի տրամադրման համար պայմանագրային վճարը չի կարող գերազանցել 20 000 դրամը: Ամբողջական փաստաթղթերի առկայության դեպքում ծագման հավաստագիրը տրամադրվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Բացասական փորձաքննության ակտի դեպքում դիմողն իրավունք ունի պահանջելու երկրորդ փորձաքննություն՝ այլ փորձագետի կամ անկախ փորձաքննության մարմնի մասնակցությամբ:
- Նոր կարգով փորձաքննության մարմինների համար սահմանվել են անկախության, անաչառության, շահերի բախման կանխարգելման, ներքին որակի վերահսկողության և փաստաթղթերի հետագծելիության պահանջներ: Փորձագետները ենթակա են որակավորման՝ թեստավորման և բանավոր քննության միջոցով, իսկ հաջողությամբ որակավորված անձանց տրամադրվում է հինգ տարի գործողության ժամկետով սերտիֆիկատ: Գործող փորձագետների և փորձաքննության մարմինների համար սահմանվել է վեցամսյա անցումային ժամանակահատված: Բացի այդ, 2028 թվականի հունվարի 1-ից փորձաքննության արդյունքների գրանցումը, պահպանումն ու հետագծելիությունը, ինչպես նաև ծագման հավաստագրերի տրամադրումն իրականացվելու են բացառապես էլեկտրոնային եղանակով: Միաժամանակ, ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1772-Ն որոշումը:

«Հայաստանի Հանրապետությունում ապրանքների դրոշմավորման փորձնական ծրագրերի հաստատման մասին» ՀՀ կառավարության N 1566-L, N 1572-L, N 1574-L, N 1576-L, N 1578-L և N 1582-L որոշումներ (ընդունված՝ 29.10.2026 թ., ծրագրերի իրականացման ժամկետ՝ 01.11.2026–30.11.2026 թթ.)

- ՀՀ կառավարության 2026 թվականի հոկտեմբերի 29-ի որոշումներով հաստատվել են ապրանքների տարբեր խմբերի թվային դրոշմավորման փորձնական ծրագրեր: Ծրագրերում ընդգրկված են սննդամթերքի, հրուշակեղենի, կոշկեղենի, լուսանկարչական սարքավորումների, տան և ինտերիերի պարագաների, պիրոտեխնիկական արտադրանքի, հեծանիվների, մոտոցիկլների, խաղալիքների, բժշկական արտադրատեսակների, անվադողերի, ավտոպահեստամասերի, բնական մորթուց հագուստի և այլ ապրանքների առանձին տեսակներ: Ծրագրերի նպատակն է արդիականացնել ապրանքների դրոշմավորման ավտոմատացված տեղեկատվական համակարգը՝ ապահովելով ապրանքների շրջանառության ամբողջական հետագծելիությունը և իրական ժամանակում վերահսկողությունը, ինչպես նաև համակարգի փոխգործակցությունը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների համանման համակարգերի հետ:
- Ծրագրերի շրջանակում նախատեսվում է ապրանքի յուրաքանչյուր միավորի դրոշմավորում եզակի և չկրկնվող Data Matrix ծածկագրով, որը հնարավորություն կտա հետևելու ապրանքի շարժին՝ արտադրությունից կամ ներմուծումից մինչև վաճառք, արտահանում, արտադրական նպատակով օգտագործում կամ ոչնչացում: Փորձարկվելու են դրոշմավորման ծածկագրերի տրամադրման, ապրանքների շրջանառության տարբեր փուլերում դրանց հաշվառման, տնտեսավարողների տեղեկատվական համակարգերի ինտեգրման և պետական մարմինների հետ տվյալների փոխանակման մեխանիզմները: Նախատեսվում է նաև դրոշմավորման համակարգի ինտեգրում ՊԵԿ-ի և պետական այլ տեղեկատվական համակարգերի հետ, ինչպես նաև սպառողների կողմից ապրանքների իսկությունը ստուգելու հնարավորություն՝ հատուկ բջջային հավելվածի միջոցով:
- Տնտեսավարողների մասնակցությունը փորձնական ծրագրերին կամավոր է, իսկ անհրաժեշտ նույնականացման միջոցները տրամադրվում են անվճար: Ծրագրերի իրականացման լիազոր մարմինը ՀՀ պետական եկամուտների կոմիտեն է, իսկ ազգային օպերատորը՝ «Ի-ՄԱՐԿ» ՍՊԸ-ն, որն ապահովելու է տեղեկատվական համակարգի ներդրումն ու շահագործումը, տեղեկատվական անվտանգության պահանջների մշակումը և դրոշմավորման ծածկագրերի տրամադրումը: Ծրագրերի նպատակներից են ապրանքաշրջանառության թափանցիկության բարձրացումը, ստվերային շրջանառության և կեղծ ապրանքների տարածման սահմանափակումը, ինչպես նաև ապրանքների շրջանառության վերաբերյալ տվյալների հասանելիությունը:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության N 1396-Ա որոշում

- Նախագծով նախատեսվում է ընդլայնել երեխաների սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության քրեաիրավական պաշտպանության միջոցները: Մասնավորապես, առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգիրքը լրացնել նոր՝ 298.1-ին հոդվածով, որով քրեական պատասխանատվություն է նախատեսվում պոռնկությամբ զբաղվող՝ 12 տարին լրացած, սակայն 18 տարին չլրացած անձի ծառայությունից օգտվելու համար, եթե բացակայում են Օրենսգրքի 189-րդ, 190-րդ, 198-րդ կամ 199-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների հատկանիշները:
- Նոր հանցակազմով նախատեսվում է տարբերակված պատժաչափ՝ կախված երեխայի տարիքից: Մասնավորապես, 16–18 տարեկան երեխայի ծառայությունից օգտվելու համար նախատեսվում է ազատության սահմանափակում՝ մեկից երեք տարի ժամկետով, կարճաժամկետ ազատազրկում՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկում՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: Իսկ 12–16 տարեկան երեխայի ծառայությունից օգտվելու համար նախատեսվում է ազատազրկում՝ երեքից վեց տարի ժամկետով:
- Բացի այդ, նախագծով առաջարկվում է բացառել երեխայի նկատմամբ սեռական ազատության կամ սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցանք կատարած անձի՝ գործուն զղջալու կամ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու հնարավորությունը:
- Նախատեսվում է, որ օրենքը ուժի մեջ է մտնելու հրապարակման պահից տասնօրյա ժամկետում:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին և հարակից օրենքների նախագծերին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության N 1400-Ա որոշում:

- Նախագծերով առաջարկվում է վերանայել հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանության, դրանց օգտագործման, կոլեկտիվ կառավարման և իրավախախտումների համար պատասխանատվության կարգավորումները: Մասնավորապես, Արհեստական բանականության մասով նախատեսվում է հեղինակային իրավունքով չպահպանվող օբյեկտների շարքում ուղղակիորեն ներառել արհեստական բանականությամբ ստեղծված ստեղծագործությունները: Միաժամանակ, հեղինակ կարող է ճանաչվել միայն ստեղծագործությունը ստեղծած ֆիզիկական անձը:
- Հեղինակային և հարակից իրավունքների կոլեկտիվ կառավարման ոլորտում առաջարկվում է ներդնել կազմակերպությունների պետական հավատարմագրման և վերահսկողության նոր համակարգ: Նախատեսվում են դրանց գործունեության թափանցիկության, իրավատերերին հասանելիք վարձատրության հավաքագրման և բաշխման նոր պահանջներ: Սահմանվում է, որ կոլեկտիվ կառավարման կազմակերպության կառավարման վճարը չի կարող գերազանցել առանձին իրավատիրոջը հասանելիք գումարի 30 տոկոսը: Նախատեսվում է նաև հեղինակային վարձատրության նվազագույն դրույքաչափերի սահմանում, որոնք պարտադիր կլինեն համապատասխան կազմակերպությունների և օգտագործողների համար:
- Առևտրային գործունեության մասով նախատեսվում է ռեստորանների, սրճարանների, բարերի, ինչպես նաև կարաոկեների, դիսկոտեկների և գիշերային ակումբների գործունեության համար պարտադիր դարձնել հավատարմագրված կոլեկտիվ կառավարման կազմակերպության հետ պայմանագրի առկայությունը:

Համապատասխան պահանջները նախատեսվում է կիրառել առաջին կոլեկտիվ կառավարման կազմակերպության հավատարմագրի տրամադրումից հետո:

- Իրավունքների պաշտպանության մասով առաջարկվում է ընդլայնել իրավախախտումների համար նախատեսված պաշտպանության միջոցները, այդ թվում՝ սահմանելով առանց թույլտվության օգտագործման դիմաց փոխհատուցման պահանջ ներկայացնելու հնարավորություններ: Կարգավորվում է նաև հոսթինգի և ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցողների պատասխանատվությունը՝ հեղինակային կամ հարակից իրավունքների խախտումների մասին տեղեկացված լինելու և համապատասխան խախտումները կանխելու տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքերում:
- Բացի այդ, նախագծով ներդրվում է «տիրազուրկ ստեղծագործություն» հասկացությունը՝ սահմանելով այն ստեղծագործությունների օգտագործման կարգը, որոնց իրավատերերը պատշաճ որոնման արդյունքում չեն նույնականացվել կամ հայտնաբերվել: Նախատեսվում է հանրային գրադարաններին, թանգարաններին, ուսումնական հաստատություններին և օրենքով սահմանված այլ կազմակերպություններին թույլատրել նման ստեղծագործությունների թվայնացումը, պահպանումը և հանրությանը մատչելի դարձնելը՝ բացառապես օրենքով սահմանված հանրային շահերին առնչվող նպատակներով:

«Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի նախագծի և հարակից նախագծերի փաթեթին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության N 1481-Ա որոշում (ընդունված՝ 15.10.2026 թ.)

- «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել խտրականության հասկացությունը, տեսակները և պաշտպանված հատկանիշների շրջանակը: Մասնավորապես, խտրականության տեսակներ են նախատեսվում ուղղակի և անուղղակի խտրականությունը, խտրականության հրահրումը, ոտնձգությունը, սեգրեգացիան (խտրազատում), վիկտիմիզացիան (զոհայնացում), հատվող խտրականությունը և հաշմանդամություն ունեցող անձանց համար խելամիտ հարմարեցումների ապահովման մերժումը: Խտրականության արգելքը տարածվելու է հանրային և մասնավոր հարաբերությունների լայն շրջանակի վրա, այդ թվում՝ աշխատանքային, առևտրային, բանկային, ֆինանսական, ապահովագրական, կրթական և ծառայությունների մատուցման ոլորտներում:
- Նախագծով նախատեսվում է, որ պաշտպանված հատկանիշների հիմքով տարբերակումը, բացառումը, սահմանափակումը կամ նախապատվությունը խտրականություն չի համարվի, եթե հետապնդում է իրավաչափ նպատակ, իսկ կիրառվող միջոցներն անհրաժեշտ և համաչափ են այդ նպատակին: Այս բացառությունը, սակայն, չի տարածվելու խտրականության հրահրման, ոտնձգության և վիկտիմիզացիայի նկատմամբ:
- Առաջարկվում է նաև Մարդու իրավունքների պաշտպանին վերապահել իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մարմնի գործառույթներ՝ նախատեսելով նրա գործունեությանն աջակցող Խտրականության հարցերով խորհրդի ձևավորում: Խտրականության ենթարկված անձանց համար նախատեսվում են իրավական պաշտպանության միջոցներ, այդ թվում՝ դատարան դիմելու, խտրականության հետևանքների վերացման, խախտված իրավունքների վերականգնման և պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու հնարավորություններ:
- «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել խտրականության չենթարկվելու իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի քննության հատուկ վարույթ:

Այդ կարգով նախատեսվում է քննել նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ պայմանավորված խտրականության վերաբերյալ գործերը, ինչպես նաև խտրականության վերաբերյալ աշխատանքային վեճերը:

- Նախագծով նախատեսվում է, որ խտրականության վերաբերյալ գործերն առաջին ատյանի դատարանում քննվելու և լուծվելու են հայցադիմումը վարույթ ընդունելու պահից վեց ամսվա ընթացքում: Միաժամանակ, այս գործերով դատարանը փաստական հանգամանքները պարզելու է ի պաշտոնե (ex officio)՝ չսահմանափակվելով կողմերի ներկայացրած ապացույցներով և անհրաժեշտության դեպքում իր նախաձեռնությամբ ձեռք բերելով գործի լուծման համար նշանակություն ունեցող տեղեկություններ:
- Էական փոփոխություն է նախատեսվում նաև ապացուցման պարտականության բաշխման մասով: Հայցվորը պարտավոր է ներկայացնել խտրականության առերևույթ առկայությունը հիմնավորող փաստական տվյալներ և փաստարկներ: Սակայն Մարդու իրավունքների պաշտպանի՝ խտրականության չենթարկվելու իրավունքի խախտման առկայության մասին որոշման դեպքում հայցվորն ազատվում է այդ պարտականությունից, և խտրականության բացակայությունն ապացուցելու պարտականությունը դրվում է պատասխանողի վրա:
- Հայցը բավարարելու դեպքում դատարանը ճանաչելու է խտրականության չենթարկվելու իրավունքի խախտումը և պատասխանողին պարտավորեցնելու է վերացնել խտրականության հետևանքները կամ վերականգնել հայցվորի իրավունքները, բացառությամբ դրա անհնարինության դեպքերի, ինչպես նաև համապատասխան պահանջի առկայության դեպքում՝ հատուցել պատճառված վնասը:

Վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ պայմանավորված խտրականության դեպքում վարչական մարմինը պարտավոր է լինելու դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում վերանայել համապատասխան ակտը, գործողությունը կամ անգործությունը՝ հաշվի առնելով դատարանի իրավական դիրքորոշումները:

- Նախատեսվում է, որ համապատասխան օրենքներն ուժի մեջ են մտնելու պաշտոնական հրապարակման օրվանից մեկ տարի հետո:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին և հարակից օրենքի նախագծին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության N 1527-Ա որոշում

- «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական և ֆիզիկական անձինք կարող են անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի միջոցով ինքնաշխատ եղանակով ստանալ կադաստրային տեղեկատվություն՝ համապատասխան պետական տուրքը վճարելուց անմիջապես հետո: Նոր կարգը տարածվելու է գույքի նկատմամբ գրանցված և գործող իրավունքների, դրանց սուբյեկտների, իրավունքների գրանցման հիմք հանդիսացած փաստաթղթերի, գույքի նկատմամբ սահմանափակումների, գույքի բնութագրերի, կադաստրային արժեքի և օրենքով սահմանված այլ տեղեկությունների վրա:
- Նախատեսվում է նաև հնարավորություն ստանալ տեղեկություններ որոշակի անձին որևէ իրավունքով պատկանող անշարժ գույքի առկայության, ինչպես նաև բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի առանձին գույքային միավորների սեփականատերերի վերաբերյալ: Տեղեկությունների տրամադրումը ենթակա է լինելու օրենքով սահմանված մատչելիության սահմանափակումներին, իսկ պետական գաղտնիք կամ սահմանափակ մատչելիությամբ տեղեկություններ պարունակող տվյալների տրամադրումը մերժվելու է համապատասխան թույլտվություն կամ իրավունք չունեցող անձանց:

- «Պետական տուրքի մասին» օրենքի նախագծով առաջարկվում է կադաստրային տեղեկությունների ինքնաշխատ տրամադրման համար սահմանել պետական տուրքի նոր դրույքաչափեր:

Տեղեկությունների հիմնական տեսակների համար նախատեսվում է բազային տուրքի կրկնապատիկի չափով վճար, բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի առանձին գույքային միավորների սեփականատերերի վերաբերյալ տեղեկությունների դեպքում՝ յուրաքանչյուր սուբյեկտի համար բազային տուրքի չափով վճար, իսկ կադաստրային գործի փաստաթղթերի լուսապատճենների համար՝ յուրաքանչյուր էջի դիմաց բազային տուրքի 1 տոկոսի չափով վճար:

ՀՀ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՀՐԱՄԱՆՆԵՐ

«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 26-ի N 87-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ ՊԵԿ նախագահի N 1032-Ն հրաման (ընդունված՝ 02.10.2026 թ., ուժի մեջ՝ 09.10.2026 թ.)

- Հրամանով նոր խմբագրությամբ է շարադրվել անձի մաքսային զննում անցկացնելու մասին մաքսային մարմնի կողմից կայացվող որոշման ձևը:
- Նախատեսվում է պարտադիր նշել մաքսային մարմնի և զննման ենթակա ֆիզիկական անձի նույնականացման տվյալները, մաքսային զննում անցկացնելու հիմնավորումները, ինչպես նաև որոշումն ընդունած պաշտոնատար անձի տվյալները: Որոշման ձևում ամրագրվել են նաև զննման ենթակա անձի իրավունքները, այդ թվում՝ մինչև զննումը որոշմանը և զննման անցկացման կարգին ծանոթանալու, բացատրություններ ու միջնորդություններ ներկայացնելու, մայրենի լեզվից և թարգմանչի ծառայություններից օգտվելու, զննման ակտում հայտարարություններ կատարելու և մաքսային մարմնի պաշտոնատար անձանց գործողությունները բողոքարկելու իրավունքները:
- Բացի այդ, որոշման ձևով նախատեսվել է արձանագրել զննման ենթակա անձի՝ որոշմանը և իր իրավունքներին ծանոթանալու փաստը, մաքսային կանոնների խախտմամբ տեղափոխվող ապրանքները կամավոր հանձնելու վերաբերյալ առաջարկի առնչությամբ կատարված նշումները, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում ներգրավված ընթերակաների նշումները:

Անձի մաքսային զննում անցկացնելու մասին որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:

«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2022 թվականի հունվարի 18-ի N 47-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ՊԵԿ նախագահի N 1088-Ն հրաման (ընդունված՝ 15.10.2026 թ., ուժի մեջ՝ 01.01.2027 թ.)

- Հրամանով փոփոխվել են Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների կողմից ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների հաշվարկի ձևը և լրացման կարգը: Մասնավորապես, ընդլայնվել է ԱԱՀ հաշվարկի կիրառման շրջանակը՝ ներառելով ոչ միայն անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց մատուցվող էլեկտրոնային ծառայությունները, այլև ոչ ռեզիդենտ կազմակերպությունների կողմից Հայաստանում իրականացվող՝ ԱԱՀ-ով հարկման ենթակա այլ գործարքները:
- Միաժամանակ, առանձին ԱԱՀ հաշվարկի ձև և լրացման կարգ է սահմանվել ԵԱՏՄ անդամ այլ պետությունների՝ էլեկտրոնային առևտրի հարթակներ շահագործող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար, որոնք էլեկտրոնային առևտրի շրջանակներում ապրանքներ են մատակարարում Հայաստանում անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց:

Այս հաշվարկը ներկայացվելու է բացառապես էլեկտրոնային եղանակով՝ ամսական հաշվետու ժամանակաշրջանների համար: Հաշվարկում արտացոլվելու են ապրանքների մատակարարման հարկման բազան և հաշվարկված ԱԱՀ-ն՝ 20 տոկոս դրույքաչափով:

- Նոր կարգով սահմանվել են նաև արտարժույթով իրականացված գործարքների հարկման բազան դրամով արտահայտելու առանձնահատկությունները:

Մասնավորապես, ապրանքների էլեկտրոնային առևտրի դեպքում կիրառվելու է վճարման օրը ներառող ամսվա վերջին օրվա, իսկ ֆիզիկական անձանց մատուցվող էլեկտրոնային ծառայությունների դեպքում՝ համապատասխան եռամսյակի վերջին օրվա՝ ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած միջին փոխարժեքը: Արտարժույթ ընտրելու դեպքում փոխարժեքը լրացվելու է ինքնաշխատ, իսկ հաշվարկ ներկայացնողի նույնականացման տվյալները լրացվելու են ՊԵԿ-ի ոչ ռեզիդենտ ԱԱՀ վճարողների էլեկտրոնային համակարգում առկա տեղեկությունների հիման վրա:

E-DRAFT ՀԱՐԹԱԿՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԴՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի n 419-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության [**որոշման նախագիծ**]

- Նախագծով առաջարկվում է ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի N 419-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և սահմանել, որ «Օտարերկրացիների մասին» օրենքի համաձայն կացության կարգավիճակ ստանալու համար դիմող և հանրային ծառայությունների համարանիշ չունեցող անձինք կացության կարգավիճակ ստանալու դիմումի հետ միաժամանակ Միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով պետք է ներկայացնեն նաև հանրային ծառայությունների համարանիշ ստանալու դիմում:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 29-ի N 300-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության [**որոշման նախագիծ**]

- Նախագծով առաջարկվում է փոփոխել փոխադարձության սկզբունքի հիման վրա ԱՄՆ քաղաքացիների համար սահմանված՝ ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակների հետ կապված պետական տուրքի գանձման կարգավորումները:
- Մասնավորապես, առաջարկվում է սահմանել, որ պետական տուրքի հատուկ դրույքաչափերը կիրառվում են ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակ տալու դիմումների քննարկման համար՝ կացության կարգավիճակի և համապատասխան քարտի տրամադրման, ինչպես նաև հաշվառման փոխարեն:
  Նույն կարգավորումը նախատեսվում է նաև հինգ տարվա ընթացքում ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու համար կրկին դիմելու դեպքերի համար:

«Կինեմատոգրաֆիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ [**օրենքի նախագիծ**]

- Նախագծով առաջարկվում է վերանայել կինեմատոգրաֆիայի ոլորտի պետական ֆինանսավորման, ազգային ֆիլմի կարգավիճակի տրամադրման և դադարեցման, ֆիլմերի ցուցադրման, ինչպես նաև ներդրումների մասնակի վերադարձի հետ կապված կարգավորումները:
- Մասնավորապես, առաջարկվում է սահմանել, որ կինեմատոգրաֆիայի ոլորտի դրամագլուխը ձևավորվում է կենտրոնական գանձապետարանում ազգային մարմնի անվամբ բացված հաշվին պետական բյուջեից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից փոխանցվող ֆինանսական միջոցներից:

Միաժամանակ նախատեսվում է, որ ֆիլմի ցուցադրման, ինչպես նաև դրա ընթացքում գովազդի տեղադրման արդյունքում ստացված եկամուտների 5 տոկոսը ֆիլմ ցուցադրողները հատկացնում են դրամագլխին՝ Կառավարության սահմանած կարգով:

- Նախագծով առաջարկվում է նաև հստակեցնել «կինոթատրոն» և «ֆիլմի ցուցադրում» հասկացությունները: Մասնավորապես, կինոթատրոն է համարվելու համապատասխան տեխնիկական միջոցներով կահավորված այն վայրը, որի մեկ կամ մի քանի սրահների տեղերի ընդհանուր թիվը Երևանում կազմում է առնվազն 50, իսկ մարզերում՝ առնվազն 20: Ֆիլմի ցուցադրման հասկացությունը ներառելու է նաև համացանցի միջոցով, այդ թվում՝ ըստ պահանջի (VOD) և հոսքային (streaming) եղանակով ցուցադրությունը: Բացի այդ, նախատեսվում է, որ ՀՀ տարածքում ֆիլմերը պետք է ցուցադրվեն բնօրինակ լեզվով՝ հայերեն ենթագրերով կամ հայերեն կրկնօրինակմամբ:
- Ազգային ֆիլմի կարգավիճակ ստանալու համար առաջարկվում է սահմանել լրացուցիչ պայման, համաձայն որի՝ ֆիլմի բնօրինակ լեզուն պետք է լինի հայերենը, բացառությամբ այն դեպքերի, երբ օտար լեզվի օգտագործումը ստեղծագործական մտահղացման անբաժանելի մասն է: Միաժամանակ նախատեսվում է կարգավորել ազգային ֆիլմի կարգավիճակի տրամադրման, մերժման և դադարեցման ընթացակարգերը: Մասնավորապես, կարգավիճակի տրամադրումը կարող է մերժվել ոչ հավաստի տեղեկատվություն ներկայացնելու, օրենքով սահմանված պայմաններին չհամապատասխանելու կամ համապատասխան ծանուցումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում փաստաթղթերի թերությունները չվերացնելու դեպքում: Կարգավիճակը կարող է դադարեցվել ոչ հավաստի տեղեկատվության կամ կեղծ փաստաթղթերի ներկայացման, ինչպես նաև օրենսդրական պահանջների խախտման դեպքում:
- Պետական ֆինանսավորման մասով առաջարկվում է սահմանել խաղարկային, վավերագրական և անիմացիոն ֆիլմերի անվանակարգերի ֆինանսավորման մասնաբաժիններ և սահմանաչափեր՝ հաշվի առնելով ֆիլմի տեսակը, արտադրության փուլը, կարգավիճակը և այլ չափանիշներ: Միաժամանակ նախատեսվում է, որ ներդրումների մասնակի վերադարձի ենթակա ծախսերում չեն հաշվարկվելու պետական բյուջեի կամ դրամագլխի միջոցների հաշվին տվյալ ֆիլմարտադրությանը հատկացված ֆինանսավորման չափով կատարված ծախսերը: Նախագծով նաև հստակեցվում է, որ ներդրումների մասնակի վերադարձ ստանալու համար համապատասխան դիմումը պետք է ներկայացվի մինչև ֆիլմի նկարահանումների մեկնարկը:

«Ռազմարդյունաբերական համալիրի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ [օրենքի նախագիծ]

- Նախագծով առաջարկվում է վերանայել ռազմարդյունաբերական համալիրի զարգացման, պետական աջակցության տրամադրման, ռազմական կարիքների համար պետական պատվերի ձևավորման և կատարման հետ կապված կարգավորումները:
- Մասնավորապես, նախատեսվում է ռազմարդյունաբերական համալիրի զարգացման ռազմավարական ծրագրով սահմանել ոլորտի զարգացման ուղղությունները, ռազմական արտադրանքի մրցունակության բարձրացման և ոլորտի սուբյեկտներին պետական աջակցության տրամադրման միջոցառումները: Առաջարկվում է նաև ընդլայնել պետական աջակցության մեխանիզմները՝ նախատեսելով հետազոտությունների և մշակումների համաֆինանսավորում, դրամաշնորհների տրամադրում, ֆինանսական վարձակալության (լիզինգ) և այլ գործիքների կիրառում:
- Միաժամանակ առաջարկվում է հստակեցնել ռազմական կարիքների համար պետական պատվերի հաստատման և փոփոխման, ռազմական արտադրանքի գների պետական կարգավորման, ինչպես նաև պետական պայմանագրերի կատարման և արտադրանքի որակի հսկողության կարգավորումները:

Նախատեսվում է, որ Կառավարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, հաստատելու է ռազմական կարիքների համար պետական պատվերը՝ ըստ նախատեսվող միջոցառումների և ֆինանսավորման տեսակի:

««Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Գնահատման գործունեության մասին» օրենքում փոփոխություններ լրացումներ կատարելու մասին» [օրենքների նախագծեր]

- Նախագծերով առաջարկվում է վերանայել գնահատման կազմակերպություններին ներկայացվող պարտադիր պահանջները և սահմանել գնահատման գործունեությունից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության նոր կարգավորումներ:
- Մասնավորապես, նախատեսվում է, որ գնահատման կազմակերպությունը պարտավոր է ապահովագրել գնահատման գործունեությունից բխող պատասխանատվությունը՝ գնահատողի կամ ծառայություններ մատուցողի մասնագիտական սխալի, բացթողման կամ գնահատման ստանդարտների խախտման հետևանքով պատվիրատուին կամ շահառուին պատճառված դրամական վնասի հատուցումն ապահովելու նպատակով: Յուրաքանչյուր գնահատողի կամ ծառայություններ մատուցողի համար պարտադիր ապահովագրության տարեկան նվազագույն ապահովագրական գումարը սահմանվում է 150 միլիոն ՀՀ դրամ:
- Նախագծով սահմանվում է, որ ապահովագրական պատահար է համարվում այն դեպքը, երբ մասնագիտական սխալի կամ խախտման հետևանքով գույքը թերագնահատվել կամ գերագնահատվել է, պատվիրատուին կամ շահառուին պատճառվել է փաստացի դրամական վնաս, և առկա է անմիջական պատճառահետևանքային կապ խախտման ու վնասի միջև: Ընդ որում, գնահատված արժեքի և գույքի հետագա շուկայական արժեքի տարբերությունն ինքնին ապահովագրական պատահար չի համարվում:

Ապահովագրական հատուցման ենթակա վնասի փաստը, չափը և պատճառահետևանքային կապը պետք է հաստատվեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, որի հիման վրա էլ առաջանում է ապահովագրական հատուցման վճարման պարտավորությունը:

- Միաժամանակ առաջարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նախատեսել, որ ապահովագրության պայմանագիրը տարածվում է նաև դրա գործողության ընթացքում հաստատված գնահատման հաշվետվությունների հետևանքով պայմանագրի ավարտից հետո առաջացած ապահովագրական պատահարների վրա: Հստակեցվում են նաև ապահովագրական հատուցման պահանջների հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման առանձնահատկությունները:
Մասնավորապես, ժամկետը հաշվարկվելու է այն օրվանից, երբ վնաս կրած անձն իմացել է կամ պետք է իմանար վնասի և դրա՝ գնահատման ընթացքում թույլ տրված խախտմամբ պայմանավորված լինելու մասին: Գնահատման կազմակերպության դեմ նույն վնասի հատուցման վերաբերյալ հայց ներկայացնելու դեպքում նախատեսվում է նաև ապահովագրողի նկատմամբ պահանջի հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման հատուկ կարգ:

«Վճարային ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և հարակից այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծեր ՀՀ [օրենքի նախագիծ]

- Նախագծով առաջարկվում է ամբողջությամբ վերանայել վճարահաշվարկային համակարգերի և կազմակերպությունների գործունեության իրավական կարգավորումները՝ գործող օրենքը շարադրելով նոր խմբագրությամբ և վերանվանելով «Վճարային ծառայությունների մասին» օրենք:
Նախատեսվում է ընդլայնել կարգավորման առարկան՝ ներառելով վճարային ծառայությունների մատուցման, բաց բանկինգի, վճարային կազմակերպությունների կառավարման, հաճախորդների միջոցների պաշտպանության և վճարային

գործառնությունների կատարման նոր պահանջներ:

- Մասնավորապես, առաջարկվում է՝
- Ներդնել բաց բանկինգի իրավական կարգավորումներ: Նախատեսվում է վճարային ծառայություններ օգտագործողի համաձայնությամբ երրորդ անձանց կողմից վճարումների նախաձեռնման և վճարային հաշիվների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ծառայությունների մատուցման հնարավորություն: Հաշիվները սպասարկող բանկերն ու վճարային կազմակերպությունները պարտավոր կլինեն ապահովել համապատասխան ծառայություններ մատուցողների հասանելիությունը անհրաժեշտ տվյալներին և ծրագրային միջերեսներին՝ պահպանելով անվտանգության միասնական պահանջները:
- Սահմանել վճարային կազմակերպություններում նշանակալից մասնակցության ձեռքբերման նոր կարգ: Նախատեսվում է Կենտրոնական բանկի նախնական համաձայնության պահանջ՝ կազմակերպության կանոնադրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար: Ուղղակի նշանակալից մասնակցություն է համարվելու ձայնի իրավունք տվող 10 և ավելի տոկոս մասնակցությունը, իսկ մասնակցության 20 և 50 տոկոս շեմերը գերազանցելու դեպքում պահանջվելու է նոր նախնական համաձայնություն: Առանց համապատասխան համաձայնության նշանակալից մասնակցության ձեռքբերման գործարքը համարվելու է առ ոչինչ:
- Սահմանել վճարային կազմակերպությունների կառավարման և ներքին հսկողության նոր պահանջներ: Նախատեսվում է պարտադիր ունենալ ներքին աուդիտի ստորաբաժանում, ռիսկերի կառավարման, տեղեկատվական անվտանգության և համապատասխանության ապահովման պատասխանատուներ: Միաժամանակ կարգավորվելու են կազմակերպությունների ղեկավարների մասնագիտական համապատասխանության, նրանց գրանցման և գործունեության նկատմամբ վերահսկողության հարցերը:
- Ամրապնդել հաճախորդների միջոցների պաշտպանությունը: Վճարային կազմակերպությունները պարտավոր կլինեն հաճախորդներից ստացված և դեռևս չփոխանցված դրամական միջոցներն առանձնացնել սեփական միջոցներից: Այդ միջոցները չեն կարող բռնագանձվել կազմակերպության պարտավորությունների դիմաց, իսկ լուծարման կամ սնանկության դեպքում չեն ներառվի կազմակերպության լուծարային միջոցների կազմում:
- Սահմանել չվավերացված և սխալ կատարված վճարային գործառնությունների համար պատասխանատվության նոր կանոններ: Նախատեսվում է, որ չվավերացված գործառնության դեպքում վճարային ծառայություն մատուցողը, օրենքով նախատեսված բացառություններով, պարտավոր է վերադարձնել գումարը ոչ ուշ, քան համապատասխան տեղեկությունն ստանալուն հաջորդող գործառնական օրվա ավարտը: Միաժամանակ վճարային ծառայություն մատուցողի վրա է դրվելու գործառնության պատշաճ վավերացման ապացուցման պարտականությունը: Նախատեսվում է նաև շահառուի անվան և նույնականացնող եզակի համարի համապատասխանության անվճար ստուգման հնարավորություն՝ վճարողի պահանջով:
- Ներդնել գործառույթների պատվիրակման առանձին կարգավորումներ: Վճարային կազմակերպությունների և վճարային համակարգերի համապատասխան օպերատորների էական գործառույթների պատվիրակումը թույլատրվելու է միայն Կենտրոնական բանկի նախնական թույլտվությամբ: Առանց այդ թույլտվության կնքված պատվիրակման գործարքը համարվելու է առ ոչինչ: Կարգավորվելու են նաև կոնտրագենտների պատշաճ ուսումնասիրության, պատվիրակման ռիսկերի կառավարման և վերահսկողության պահանջները:
- Նախագծով նախատեսվում է օրենքի ուժի մեջ մտնելը 2027 թվականի հուլիսի 1-ից: Գործող լիցենզիա ունեցող վճարային կազմակերպությունները պարտավոր կլինեն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, անցնել վերալիցենզավորման գործընթաց:

«Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով օտարվող սեփականության ձեռք բերողի ընտրության իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

- Նախագծով առաջարկվում է սահմանել հանրության գերակա շահերի ապահովման նպատակով օտարվող սեփականության ձեռքբերողի ընտրության կարգը՝ այն դեպքերի համար, երբ ձեռքբերողը պետությունը, համայնքը կամ դրանց հիմնադրած կամ մասնակցությամբ իրավաբանական անձը չէ:
  Նախագծով նախատեսվում է ձեռքբերողի ընտրությունն իրականացնել բաց մրցութային ընթացակարգով, որը կարող է նախաձեռնվել ինչպես իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, այնպես էլ մասնավոր իրավաբանական անձի կողմից:
- Իրավասու մարմնի նախաձեռնությամբ մրցույթն իրականացվելու է երկու փուլով՝ հայտերի նախնական ընտրություն և ներկայացված ծրագրերի մանրամասն գնահատում: Մրցույթի հայտարարությունը պետք է հրապարակվի հայտերի ընդունման վերջնաժամկետից առնվազն 60 օր առաջ: Մասնակիցների համար սահմանվում են ֆինանսական կայունության, մասնագիտական փորձառության և հարկային կարգապահության պարտադիր պահանջներ, այդ թվում՝ վերջին երկու ֆինանսական տարիներին դրական զուտ ակտիվների, վերջին տասը տարում համադրելի ոլորտում առնվազն մեկ ավարտված ծրագրի փորձի, ժամկետանց հարկային պարտավորությունների բացակայության և սեփականատերերի փոխհատուցման համար անհրաժեշտ միջոցների առկայության պահանջներ: Հայտերը գնահատվելու են 100 միավորանոց համակարգով՝ հաշվի առնելով ծրագրի իրագործելիությունը, ֆինանսական երաշխիքները, սեփականատերերին առաջարկվող փոխհատուցման պայմանները և սոցիալական ազդեցության կառավարման մեխանիզմները:
- Առանձին ընթացակարգ է նախատեսվում մասնավոր նախաձեռնությամբ ներկայացվող ծրագրերի համար: Մասնավոր իրավաբանական անձը կամ կոնսորցիումը կարող է սեփական նախաձեռնությամբ ներկայացնել հանրության գերակա շահի նպատակով սեփականության օտարում պահանջող ծրագիր: Իրավասու մարմինը 30 աշխատանքային օրվա ընթացքում քննարկելու է առաջարկությունը, իսկ դրա նախնական ընդունման դեպքում հրապարակվելու է հայտարարություն՝ այլ մասնակիցներին մրցակցող առաջարկներ ներկայացնելու համար տրամադրելով առնվազն 45 օր: Սկզբնական նախաձեռնողին նախատեսվում է տրամադրել մինչև 5 գնահատման միավորի առավելություն՝ սեփական միջոցներով կատարված նախնական ուսումնասիրությունների և ծրագրի մշակման դիմաց: Մրցակցող առաջարկների բացակայության դեպքում նախաձեռնողը կարող է հաղթող ճանաչվել՝ պարտադիր պահանջներին համապատասխանելու պայմանով:
- Նախագծով սահմանվում են նաև օտարվող գույքի սեփականատերերի փոխհատուցման ֆինանսական երաշխիքներ: Մասնավորապես, նախատեսվում է, որ ընտրված ձեռքբերողը պետք է հավաստի փոխհատուցման նախնական հաշվարկված ընդհանուր գումարի առնվազն 135 տոկոսի չափով ֆինանսական միջոցների առկայությունը՝ ներառյալ օրենքով սահմանված հավելավճարներն ու համապատասխան այլ փոխհատուցումները: Ձեռքբերողի հետ կնքվող պայմանագրով ամրագրվելու են փոխհատուցման ժամկետները, ներդրումային պարտավորությունները, պայմանագրի լուծման հիմքերը և վերահսկողության մեխանիզմները: Օտարվող հողամասերի վերաբերյալ քաղաքաշինական թույլտվության տրամադրումը, նախատեսված բացառությամբ, թույլատրվելու է միայն սեփականատերերին փոխհատուցումը փաստացի տրամադրելուց կամ դրա տրամադրմանն ուղղված համապատասխան գործողություններ կատարելուց հետո: Բացի այդ, ձեռքբերողը պարտավորվելու է փոխհատուցման ավարտից հետո վեցամսյա ժամկետում ներկայացնել անկախ մասնագետի ամփոփիչ աուդիտի եզրակացություն:
- Մրցույթի արդյունքների հիման վրա իրավասու մարմինը կառավարություն է ներկայացնելու ձեռքբերողի ընտրության և հանրության գերակա շահի ճանաչման վերաբերյալ միասնական առաջարկություն:

Հանրության գերակա շահի ճանաչման մասին կառավարության որոշմամբ միաժամանակ նշանակվելու է նաև ձեռքբերողը:

«Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ [օրենքների նախագծեր]

- Նախագծերով առաջարկվում է վերանայել ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ու փորձաքննության հետ կապված որոշ կարգավորումներ՝ մասնավորապես հստակեցնելով օգտակար հանածոների որոնողական աշխատանքների շրջանակը և համայնքի ավագանու նախնական անհամաձայնության իրավական հետևանքները:
- Մասնավորապես, առաջարկվում է «Ընդերքի մասին» օրենսգրքում սահմանել «օգտակար հանածոների որոնողական աշխատանքներ» հասկացությունը՝ որպես մետաղական օգտակար հանածոների հնարավոր հանքայնացման հայտնաբերմանն ուղղված երկրաբանական, երկրաֆիզիկական, երկրաքիմիական և այլ ուսումնասիրություններ՝ ներառյալ կանխատեսումային ռեսուրսների գնահատումը: Ընդ որում, որոնողական աշխատանքների շրջանակում չեն ներառվելու օգտակար հանածոների պաշարների գնահատումը կամ վերագնահատումը: Միաժամանակ առաջարկվում է արգելել երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործումը՝ առանց լիազոր մարմնի հետ համաձայնեցված երկրաբանական ուսումնասիրության ծրագրի:
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասով առաջարկվում է սահմանել, որ համայնքի ավագանու նախնական անհամաձայնությունն ինքնին հիմք չի հանդիսանալու փորձաքննության փաստաթղթերի ընդունումը մերժելու, փորձաքննությունը չսկսելու կամ այն դադարեցնելու համար: Նման անհամաձայնության առկայության դեպքում նախաձեռնողը կարող է փաստաթղթերը ներկայացնել պետական փորձաքննության:
- Նախատեսվում է, որ լիազոր մարմինը փորձաքննության ընթացքում գնահատելու է համայնքի ավագանու անհամաձայնության հիմքերը, հանրային լսումների արդյունքները, շահագրգիռ հանրության դիտողություններն ու առաջարկությունները, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելման կամ նվազեցման միջոցառումները: Եթե համայնքի ավագանու անհամաձայնության հիմքերը փորձաքննության չափանիշներով հիմնավոր համարվեն, տրամադրվելու է բացասական պետական փորձաքննական եզրակացություն: Հակառակ դեպքում, եթե այդ հիմքերը բավարար չհամարվեն կամ համապատասխան ռիսկերը կանխարգելելի կամ նվազեցվող լինեն, լիազոր մարմինը կարող է տրամադրել դրական եզրակացություն՝ պարտադիր պատճառաբանելով համայնքի ավագանու ներկայացրած հիմքերի ընդունումը կամ մերժումը:
- Բացի այդ, առաջարկվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննությունից ազատել առանց դաշտային աշխատանքների՝ բացառապես առկա երկրաբանական նյութերի և տվյալների հիման վրա օգտակար հանածոների պաշարների վերագնահատման նպատակով իրականացվող երկրաբանական ուսումնասիրությունները:
- Նախագծերով նախատեսվում է օրենքների ուժի մեջ մտնելը պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Մինչ այդ սկսված և չավարտված թույլտվությունների տրամադրման ու փորձաքննության գործընթացների նկատմամբ շարունակելու են կիրառվել համապատասխան գործընթացների մեկնարկի պահին գործող իրավակարգավորումները:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մայիսի 22-ի N 610-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի N 1268-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության **որոշումների նախագծեր**

- Նախագծերով առաջարկվում է սահմանել Հայաստանի Հանրապետության աշխատանքային մուտքի վիզայի տրամադրման և գործող մուտքի վիզայի տեսակի ու այցելության նպատակի փոփոխման կարգավորումները:
- Մասնավորապես, նախատեսվում է ներդնել աշխատանքային մուտքի վիզայի առանձին տեսակ (Գ/W-1), որը տրամադրվելու է բացառապես էլեկտրոնային եղանակով՝ մինչև 120 օր Հայաստանի Հանրապետությունում գտնվելու իրավունքով, մեկանգամյա կամ բազմակի մուտքի համար՝ առանց երկարաձգման հնարավորության: Աշխատանքային մուտքի վիզա ստանալու համար հրավեր չի պահանջվելու, սակայն, որպես կանոն, անհրաժեշտ է լինելու ներկայացնել Հայաստանում գտնվող գործատուի պարտավորագիրը՝ մինչև 120 օր կարճաժամկետ աշխատանքային գործունեություն իրականացնելու վերաբերյալ:
- Նախագծերով առաջարկվում է նաև հնարավորություն ընձեռել ՀՀ տարածքում այլ տեսակի վիզայի հիմքով գտնվող օտարերկրացիներին փոխել իրենց վիզայի տեսակը և այցելության նպատակը՝ աշխատանքային մուտքի վիզա ստանալու համար, եթե նրանք դիմում են աշխատանքային գործունեության հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու նպատակով: Այս դեպքում նոր վիզան տրամադրվելու է գործող վիզայի մնացած վավերականության ժամկետով, բայց ոչ ավելի, քան 120 օրով՝ միաժամանակ ուժը կորցրած ճանաչելով նախկին վիզան: Դիմումների ներկայացումն ու քննարկումն իրականացվելու են էլեկտրոնային համակարգի միջոցով:
- Միաժամանակ առաջարկվում է հստակեցնել, որ Բահրեյնի, Սաուդյան Արաբիայի և Օմանի քաղաքացիների, ինչպես նաև որոշ պետություններում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների համար սահմանված առանց մուտքի վիզայի այցելությունների ռեժիմը չի տարածվելու ՀՀ աշխատանքային մուտքի վիզա ստանալու հետ կապված հարաբերությունների վրա:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 1985-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության **որոշման նախագիծ**

- Նախագծով առաջարկվում է նոր խմբագրությամբ շարադրել առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակներում Առողջության համընդհանուր ապահովագրության հիմնադրամի և բժշկական օգնություն ու սպասարկում իրականացնողների, ինչպես նաև Հիմնադրամի և դեղատների միջև պայմանագրերի կնքման ընթացակարգն ու նվազագույն պահանջները:
- Մասնավորապես, առաջարկվում է սահմանել պայմանագրերի կնքման ընթացակարգը հօգուտ ապահովագրված անձանց, ինչպես նաև նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայություններից օգտվող անձանց՝ առանձին նախատեսելով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներին ներկայացվող նվազագույն, այդ թվում՝ որակի պահանջները, և դեղատներին ներկայացվող նվազագույն պահանջները:
- Միաժամանակ նախատեսվում է պայմանագրերի վարման էլեկտրոնային համակարգին անցնելու պարտավորություն: Մասնավորապես, որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները և դեղատները պարտավոր կլինեն ամբողջությամբ ավարտել պայմանագրերի վարման էլեկտրոնային համակարգին անցնելու գործընթացը:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և հարակից օրենքներում լրացումներ կատարելու մասին ՀՀ [օրենքների նախագծեր]

- Նախագծերի փաթեթով առաջարկվում է սահմանել հատուկ իրավակարգավորումներ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա և դրա իրագործման նպատակով ստեղծված այն բաժնետիրական ընկերությունների համար, որոնց կանոնադրական կապիտալում Հայաստանի Հանրապետությունն ունի առնվազն 25 տոկոս մասնակցություն:
- Մասնավորապես, առաջարկվում է հնարավորություն նախատեսել նշված ընկերությունների կանոնադրությամբ կամ բաժնետիրական համաձայնագրով սահմանելու «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքից տարբերվող կարգավորումներ: Դրանք կարող են վերաբերել խոշոր գործարքների և շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքմանը, բաժնետերերի ընդհանուր ժողովի և խորհրդի ձևավորմանն ու որոշումների կայացմանը, բաժնետոմսերի օտարման դեպքում նախապատվության իրավունքին, բաժնետոմսերի հետգնմանը, ինչպես նաև բաժնետերերի և դուստր ու կախյալ ընկերությունների պատասխանատվությանը: Միաժամանակ նախատեսվում է, որ նշված ընկերությունների կանոնադրությունները և դրանց փոփոխությունները ենթակա կլինեն Կառավարության հաստատմանը:
- Առաջարկվող առանձնահատկությունները տարածվելու են նաև նշված ընկերությունների կողմից հիմնադրված այն ընկերությունների վրա, որոնց կանոնադրական կապիտալի առնվազն 25 տոկոսն ուղղակի կամ անուղղակի պատկանում է Հայաստանի Հանրապետությանը: Ընդ որում, պետական մասնակցությունը 25 տոկոսից նվազելու դեպքում հատուկ կարգավորումները դադարելու են կիրառվել:
- Բացի այդ, նախագծերով առաջարկվում է նախատեսել, որ վերոնշյալ ընկերությունների կնքած գործարքների նկատմամբ չեն կիրառվելու «Գնումների մասին» օրենքի կարգավորումները, իսկ ընկերությունների նկատմամբ՝ տնտեսական մրցակցության օրենսդրությամբ սահմանված համակենտրոնացման կարգավորումները և «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքը:
- Միաժամանակ առաջարկվում է սահմանել, որ նշված ընկերությունների պետական գրանցման ժամանակ պետք է ներկայացվի նաև բաժնետիրական համաձայնագրի պատճենը, իսկ կանոնադրության փոփոխությունների կամ նոր խմբագրության պետական գրանցման դեպքում՝ համապատասխան փոփոխությունները հաստատելու մասին Կառավարության որոշման պատճենը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 79-Ն հրամանում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի [հրամանի նախագիծ]

- Նախագծով առաջարկվում է լրացնել «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերը՝ սահմանելով շինարարական աշխատանքների գիշերային և շուրջօրյա իրականացման պայմանները, աղմուկի ու թրթռման վերահսկողության, ինչպես նաև բնակչության իրազեկման պահանջները:
- Մասնավորապես, նախատեսվում է թույլատրել շինարարական, վերակառուցման, հիմնանորոգման, վերականգնման և քանդման աշխատանքների շուրջօրյա իրականացումը, այդ թվում՝ հանգստյան և ոչ աշխատանքային օրերին՝ պայմանով, որ պահպանվում են աղմուկի և թրթռման թույլատրելի մակարդակները: Գիշերային ժամերին իրականացվող աշխատանքները, ըստ դրանց աղմուկային և թրթռումային ազդեցության, առաջարկվում է բաժանել երեք խմբի՝ թույլատրելի, պայմանականորեն թույլատրելի և սահմանափակման ենթակա:

Մասնավորապես, ներքին հարդարման և ցածր աղմուկ առաջացնող այլ աշխատանքները կարող են իրականացվել գիշերային ժամերին, իսկ բարձր աղմուկ և թրթռում առաջացնող աշխատանքները, որպես կանոն, արգելվելու են:

- Միաժամանակ նախատեսվում են բացառություններ տեխնոլոգիապես անընդհատ, վթարային և անհետաձգելի աշխատանքների համար: Մասնավորապես, այն աշխատանքները, որոնց ընդհատումը կարող է բացասաբար ազդել կառուցվածքի որակի, ամրության կամ անվտանգության վրա, թույլատրվելու է շարունակել մինչև համապատասխան տեխնոլոգիական փուլի ավարտը՝ կիրառելով աղմուկի նվազեցման տեխնիկապես հնարավոր բոլոր միջոցները: Վթարային և անհետաձգելի աշխատանքները նույնպես կարող են իրականացվել շուրջօրյա:
- Նախագծով առաջարկվում է սահմանել նաև նախնական ծանուցման և իրազեկման պահանջներ: Գիշերային ժամերին բարձր աղմուկ կամ թրթռում առաջացնող կամ տեխնոլոգիական անընդհատություն պահանջող աշխատանքների նախատեսման դեպքում կառուցապատողը, բացառությամբ վթարային և անհետաձգելի դեպքերի, պարտավոր է առնվազն 7 օր առաջ ծանուցել շինարարության թույլտվություն տրամադրած մարմնին: Բնակելի կառուցապատման տարածքներում նման աշխատանքների դեպքում նախատեսվում է նաև առնվազն 5 օր առաջ իրազեկել անմիջական ազդեցության գոտում գտնվող բնակչությանը և կազմակերպություններին:
- Բացի այդ, նախատեսվում է շուրջօրյա շինարարության դեպքում սահմանել աղմուկի կառավարման միջոցառումներ և համապատասխան դեպքերում իրականացնել աղմուկի ու թրթռման մշտադիտարկում: Թույլատրելի մակարդակների գերազանցման դեպքում համապատասխան աշխատանքը պետք է դադարեցվի կամ կիրառվեն լրացուցիչ միջոցառումներ՝ մինչև սահմանված պահանջներին համապատասխանության ապահովումը:

«Միասնական տեղեկատվական համակարգի հետ անշարժ գույքի վաճառքի կայքերի փոխգործելիության կարգը և այդ կայքերի նկատմամբ նվազագույն պարտադիր պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության [որոշման նախագիծ]

- Նախագծով առաջարկվում է սահմանել անշարժ գույքի վաճառքի կայքերի և «Ռիելթորական գործունեության մասին» օրենքով նախատեսված միասնական տեղեկատվական համակարգի միջև էլեկտրոնային փոխգործելիության կարգը, ինչպես նաև այդ կայքերի նկատմամբ նվազագույն պարտադիր պահանջները:
- Մասնավորապես, նախատեսվում է, որ անշարժ գույքի վաճառքի կայքերը միասնական տեղեկատվական համակարգին միանալու համար պետք է համապատասխանեն սահմանված տեխնիկական և անվտանգության պահանջներին, անցնեն փոխգործելիության փորձարկում և վճարեն օրենքով նախատեսված պետական տուրքը: Կայքերի սեփականատերերը համապատասխան դիմումը ներկայացնելու են Կադաստրի կոմիտե՝ էլեկտրոնային եղանակով: Պահանջներին համապատասխանելու դեպքում կայքերը ներառվելու են միասնական տեղեկատվական համակարգի հետ փոխգործելի կայքերի հրապարակային ցանկում:
- Նախագծով առաջարկվում է նաև սահմանել, որ անշարժ գույքի վերաբերյալ տվյալները միասնական տեղեկատվական համակարգում մուտքագրվելու և ստուգվելուց հետո օգտատերը կարող է ընտրել մեկ կամ մի քանի կայք՝ հայտարարությունը հրապարակելու համար: Համապատասխան վճարումը կատարելուց հետո հայտարարության տվյալներն ինքնաշխատ փոխանցվելու են ընտրված կայքերին: Ընդ որում, կայքերին փոխանցվելու են միայն հրապարակման համար նախատեսված տվյալները՝ առանց սեփականատերերի կամ այլ անձանց հրապարակման ոչ ենթակա անձնական տվյալների:
- Միաժամանակ նախատեսվում է, որ կայքերը պարտավոր են առանց բովանդակային փոփոխությունների հրապարակել համակարգից ստացված տվյալները և հստակ արտացոլել հայտարարությունների «Ստուգված է» և «Հաստատված է» կարգավիճակները:

Կայքերին արգելվելու է ինքնուրույն շնորհել կամ փոփոխել այդ կարգավիճակները: Համակարգում հայտարարության տվյալների կամ կարգավիճակի փոփոխության դեպքում համապատասխան փոփոխություններն ինքնաշխատ արտացոլվելու են նաև այն կայքերում, որտեղ հրապարակվել է հայտարարությունը:

«Ռիելթորական, անշարժ գույքի կառավարման կազմակերպություն, ռիելթոր (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող) և անշարժ գույքի կառավարիչ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող) հաշվառվելու և հաշվառումից հանելու վերաբերյալ դիմումները և կից փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգը, դիմումի ձևը և բովանդակությունը սահմանելու մասին» ՀՀ կառավարության [որոշման նախագիծ]

- Նախագծով առաջարկվում է սահմանել ռիելթորների, անշարժ գույքի կառավարիչների, ինչպես նաև ռիելթորական և անշարժ գույքի կառավարման կազմակերպությունների հաշվառման ու հաշվառումից հանելու դիմումների ներկայացման և քննարկման էլեկտրոնային ընթացակարգը:
- Մասնավորապես, նախատեսվում է, որ հաշվառման դիմումները և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելու են Միասնական տեղեկատվական համակարգի միջոցով՝ նույնականացված օգտատիրոջ անձնական գրասենյակից: Դիմողը պետք է ընտրի հաշվառման համապատասխան տեսակը և իր իրավական կարգավիճակը՝ ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր կամ կազմակերպություն, որից հետո համակարգում ձևավորվելու է համապատասխան էլեկտրոնային դիմումը:
- Ֆիզիկական անձանց հաշվառման դեպքում անձնական տվյալները նախատեսվում է լրացնել ինքնաշխատ եղանակով՝ համակարգում առկա տեղեկությունների հիման վրա: Ռիելթոր հաշվառվելու համար լրացուցիչ պահանջվելու է գործող որակավորման վկայականի համարը, որի առկայությունն ու վավերականությունը ստուգվելու են ինքնաշխատ եղանակով:
- Միաժամանակ նախատեսվում է, որ որպես ռիելթոր հաշվառված անձը միաժամանակ հաշվառվելու է նաև որպես անշարժ գույքի կառավարիչ՝ առանց առանձին դիմում ներկայացնելու անհրաժեշտության: Համակարգը ռիելթորի հաշվառումը հաստատելուց հետո ինքնաշխատ տրամադրելու է նաև անշարժ գույքի կառավարչի գործառույթների հասանելիություն:
- Նախագծով որոշման ուժի մեջ մտնելու ժամկետ է նախատեսվում 2027 թվականի հունիսի 1-ը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 13-ի N 2073-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության [որոշման նախագիծ]

- Նախագծով առաջարկվում է վերանայել մաքսային ծառայողների՝ այլ տարածաշրջան ծառայողական տեղափոխման կամ նշանակման դեպքում բնակելի տարածքի վարձակալության, տեղափոխման և անձնական գույքի տեղափոխման հետ կապված ծախսերի փոխհատուցման կարգավորումները:
- Մասնավորապես, առաջարկվում է սահմանել, որ ծառայության վայրը համարվում է մաքսային ծառայողի մշտական բնակության վայրից տարբերվող, եթե գտնվում է դրանից առնվազն 30 կմ հեռավորության վրա: Ընդ որում, մշտական բնակության վայր է համարվելու այն բնակելի տարածքը, որտեղ ծառայողը փոխհատուցման դիմումը ներկայացնելուն նախորդող ժամանակահատվածում փաստացի բնակվել է առնվազն 183 օր:
- Նախագծով առաջարկվում է նաև վերանայել բնակելի տարածքի վարձակալության համար տրամադրվող ամենամսյա փոխհատուցման չափերը՝ կախված ծառայության վայրից և ընտանիքի անդամների թվից: Մասնավորապես, Երևանում նախատեսվում է ամսական 100,000-120,000 ՀՀ դրամ, մյուս քաղաքներում՝ 72,000-96,000 ՀՀ դրամ, իսկ այլ բնակավայրերում՝ 60,000-72,000 ՀՀ դրամ փոխհատուցում: Միաժամանակ տեղափոխման և անձնական գույքի տեղափոխման հետ կապված ծախսերի փոխհատուցման հաշվարկման համար առաջարկվում է սահմանել յուրաքանչյուր կիլոմետրի դիմաց 400 ՀՀ դրամ:

- Բացի այդ, նախատեսվում է սահմանել փոխհատուցում ստանալու դիմումի ներկայացման և քննարկման ընթացակարգը: Դիմումը ներկայացվելու է Պետական եկամուտների կոմիտե՝ էլեկտրոնային կամ թղթային եղանակով, և քննարկվելու է 10 աշխատանքային օրվա ընթացքում: Սահմանվում են նաև փոխհատուցման չափի վերահաշվարկման և դրա տրամադրման դադարեցման հիմքերը: Մասնավորապես, փոխհատուցումը դադարեցվելու է մաքսային ծառայողի պաշտոնից ազատման, փոխհատուցման իրավունքից գրավոր հրաժարվելու կամ ծառայողի կամ նրա ընտանիքի անդամի կողմից համապատասխան վայրում սեփականության իրավունքով բնակելի տարածք ձեռք բերելու դեպքում:

«Համապատասխանության հայտարարագիր գրանցող մարմինների վկայագրման և վկայագրման ծառայությունների, գնահատումների վճարման կարգը և տարեկան վճարի չափը սահմանելու մասին» ՀՀ էկոնոմիկայի նախարարի [հրամանի նախագիծ]

- Նախագծով առաջարկվում է սահմանել համապատասխանության հայտարարագիր գրանցող մարմինների վկայագրման կարգը, դրանց ներկայացվող պարտադիր պահանջները, ինչպես նաև վկայագրման ծառայությունների, գնահատումների վճարման կարգը և տարեկան վճարի չափը:
- Մասնավորապես, նախատեսվում է, որ համապատասխանության հայտարարագրերի գրանցման իրավունք կունենան միայն Հավատարմագրման ազգային մարմնի կողմից վկայագրված իրավաբանական անձինք և դրանց առանձնացված ստորաբաժանումները: Վկայագրման համար սահմանվում են կառավարման համակարգին, գործունեության անկողմնակալությանը, մասնագետների որակավորմանը և շահերի բախման կանխարգելմանն առնչվող պահանջներ: Վկայագրումն իրականացվելու է էլեկտրոնային համակարգի միջոցով և տրվելու է չորս տարի ժամկետով:
- Նախագծով նախատեսվում է նաև վկայագրված մարմինների գործունեության պարբերական և արտահերթ գնահատումների իրականացում, ինչպես նաև վկայագրման կասեցման, վերականգնման, դադարեցման և վկայագրման ոլորտի փոփոխման հիմքեր:
- Միաժամանակ առաջարկվում է, որ համապատասխանության հայտարարագրեր գրանցող՝ արդեն հավատարմագրված կամ հավատարմագրման գործընթացում գտնվող արտադրանքի սերտիֆիկացման մարմինները հրամանն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, դիմեն Հավատարմագրման ազգային մարմին՝ իրենց հավատարմագրման ոլորտից համապատասխանության հայտարարագրման ընթացակարգերը բացառելու և համապատասխան վկայագրման գործընթացին անցնելու նպատակով:

«Կենսական նշանակության ոլորտում շահագործվող կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների նույնականացման չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության [որոշման նախագիծ]

- Նախագծով առաջարկվում է սահմանել կենսական նշանակության ոլորտներում շահագործվող կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների (ԿՏԵ) նույնականացման չափանիշները, որոնց հիման վրա որոշվելու է, թե որ կազմակերպությունների տեղեկատվական համակարգերն են ենթակա «Կիբեռանվտանգության մասին» օրենքով նախատեսված հատուկ կարգավորման:
- Մասնավորապես, նախատեսվում է, որ Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովը ԿՏԵ-ների նույնականացումն իրականացնելու է՝ հաջորդաբար գնահատելով հետևյալ հանգամանքները՝
- Տեղեկատվական համակարգի անհասանելիության հնարավոր ազդեցությունը մեկ կամ մի քանի կենսական նշանակության ոլորտներում ծառայությունների մատուցողների վրա (համակարգային ազդեցություն):
- Կիբեռմիջադեպի հետևանքով տեղեկատվական համակարգի անհասանելիության հնարավոր ազդեցությունը 25,000 և ավելի օգտվողների վրա:
- Կիբեռմիջադեպի հնարավոր էական ազդեցությունը տնտեսական ակտիվության, շրջակա միջավայրի, հասարակական կարգի, բնակչության կենսագործունեության, ազգային անվտանգության, առողջության և այլ կարևոր ոլորտների վրա:

- Տեղեկատվական համակարգի վերականգնման ֆինանսական ծախսերի և հաշվեկշռային արժեքի՝ 400 միլիոն ՀՀ դրամը, կամ նոր համակարգի ստեղծման ծախսերի և հաշվեկշռային արժեքի՝ 2 միլիարդ ՀՀ դրամը գերազանցելը:
- Նախագծով առաջարկվում է, որ նույնականացված ԿՏԵ-ները և դրանք շահագործող կազմակերպությունները ներառվեն Կառավարության որոշմամբ հաստատվող համապատասխան ցանկում, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից վարվող գրանցամատյանում: Նույնականացումն իրականացվելու է շարունակաբար, իսկ տեղեկատվական համակարգերի և արդեն նույնականացված ԿՏԵ-ների կարգավիճակը վերանայվելու է առնվազն երկու տարին մեկ անգամ:
- Առաջին ցանկի ձևավորման ժամանակ նախատեսվում է հիմք ընդունել նաև ԵՄ NIS 2 դիրեկտիվով սահմանված բարձր կրիտիկականության ոլորտները, ENISA-ի համապատասխան մեթոդաբանությունը և պետական պահպանության ենթակա կարևորագույն նշանակության օբյեկտների վերաբերյալ տվյալները:

«Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տվյալների շտեմարանի կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության [որոշման նախագիծ](#)

- Նախագծով առաջարկվում է հաստատել Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տվյալների շտեմարանի կանոնակարգը՝ սահմանելով դրա կառուցվածքը, տեխնիկական և անվտանգության պահանջները, տվյալների հավաքագրման, մշակման, պահպանման և հասանելիության ապահովման կարգավորումները:
- Մասնավորապես, նախատեսվում է, որ շտեմարանը գործելու է որպես միասնական, բազմաստիճան տեղեկատվական համակարգ՝ ներառելով փաստաթղթաշրջանառության, կադաստրային տվյալների, գործառույթների կառավարման, համակարգի ադմինիստրատորի և քարտեզագրական ենթահամակարգեր:
- Շտեմարանում հավաքագրվելու են անշարժ գույքի գտնվելու վայրի, որակական և քանակական բնութագրերի, կադաստրային արժեքի, սեփականության և այլ գույքային իրավունքների, դրանց սահմանափակումների, իրավատերերի և անշարժ գույքի գործարքների վերաբերյալ տվյալներ:
- Միաժամանակ առաջարկվում է սահմանել տեղեկատվական անվտանգության դասակարգում՝ հիմնված ISO/IEC 27001 միջազգային ստանդարտի գաղտնիության, ամբողջականության և մատչելիության սկզբունքների վրա: Շտեմարանի համար նախատեսվում է C2I2A3 անվտանգության մակարդակ՝ սահմանելով նաև առանձին անվտանգության մակարդակներ դրա ենթահամակարգերի համար:

«Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման համար անհրաժեշտ իրավահաստատող փաստաթղթերի ներկայացման էլեկտրոնային համակարգի տվյալների շտեմարանի կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության [որոշման նախագիծ](#)

- Նախագծով առաջարկվում է հաստատել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման համար անհրաժեշտ իրավահաստատող փաստաթղթերի ներկայացման էլեկտրոնային համակարգի տվյալների շտեմարանի կանոնակարգը՝ սահմանելով դրա կառուցվածքը, տեխնիկական և անվտանգության պահանջները, տվյալների հավաքագրման, մշակման, պահպանման և հասանելիության ապահովման կարգը:
- Մասնավորապես, նախատեսվում է, որ համակարգը ներառելու է երեք հիմնական ենթահամակարգ՝ իրավահաստատող փաստաթղթերի մուտքագրման, իրավունքների սահմանափակումների կիրառման և վերացման վերաբերյալ որոշումների մուտքագրման, ինչպես նաև օգտատերերի հասանելիության իրավունքների կառավարման համար:
- Շտեմարանում հավաքագրվելու են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը, անշարժ գույքի և իրավատերերի նույնականացման տվյալները, ինչպես նաև իրավունքների սահմանափակումների կիրառման և վերացման վերաբերյալ որոշումները: Տվյալների ներկայացումն իրականացվելու է համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների,

նոտարական համակարգի և այլ իրավասու մարմինների կողմից՝ էլեկտրոնային եղանակով:
- Միաժամանակ առաջարկվում է սահմանել C2I2A2 տեղեկատվական անվտանգության մակարդակ՝ գաղտնիության, ամբողջականության և մատչելիության ապահովման համար: Նախատեսվում են նաև տվյալների պարբերական կրկնօրինակման և վերականգնման մեխանիզմներ, իսկ տեխնիկական կամ ձևաչափային պահանջներին չհամապատասխանող տվյալների մուտքագրումը մերժվելու է՝ համապատասխան մարմնին ինքնաշխատ ծանուցմամբ:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության [որոշման նախագիծ]

- Նախագծով առաջարկվում է հստակեցնել կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման արդյունքում գլխավոր հատակագծերում և գոտիավորման նախագծերում համապատասխան փոփոխությունների կատարման և իրավասու մարմինների միջև տեղեկատվության փոխանակման ընթացակարգը:
- Մասնավորապես, նախատեսվում է, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 34.1-ին հոդվածով սահմանված դեպքերում կադաստրային քարտեզում սխալի ուղղում կատարելուց հետո գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծի կոորդինատների համապատասխան փոփոխությունները պետք է իրականացվեն «Քաղաքաշինության մասին» օրենքով սահմանված կարգով՝ Կադաստրի կոմիտեի ծանուցումն ստանալուց հետո վեցամսյա ժամկետում:
- Միաժամանակ առաջարկվում է սահմանել, որ Կադաստրի կոմիտեն սխալի ուղղումից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, կատարված փոփոխությունն արտացոլելու է ազգային գեոպորտալի համապատասխան քարտեզագրական շերտում՝ ապահովելով դրա հասանելիությունը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի համար: Ծանուցումը համարվելու է պատշաճ կատարված փոփոխության արտացոլման և հասանելիության ապահովման պահից:
- Ընդ որում, նախատեսվում է, որ ծանուցումն ունենալու է բացառապես տեղեկատվական բնույթ, և կադաստրային քարտեզում կատարված ուղղման համար ՀՀ քաղաքաշինության կոմիտեի համաձայնությունը կամ հաստատումը չի պահանջվելու:

«Հայաստանի Հանրապետությունից երկաթի և չլեգիրված պողպատի, երկաթից կամ չլեգիրված պողպատից կիսապատրաստուկների, լեգիրված ձուլակտորներով կամ այլ սկզբնական ձևերով պողպատի, զտված պղնձի և չմշակված պղնձային համաձուլվածքների, չմշակված ալյումինի, ալյումինի փոշիների և թեփուկների՝ դեպի երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր սահմանափակում կիրառելու, արտահանման լիցենզիայի տրամադրման կարգն ու պայմանները և հիմնական լիցենզիայի ձևը սահմանելու մասին» ՀՀ կառավարության [որոշման նախագիծ]

- Նախագծով առաջարկվում է 2027 թվականի հունվարի 5-ից մինչև հուլիսի 5-ը սահմանել երկաթի, պողպատի որոշ տեսակների, զտված պղնձի, չմշակված պղնձային համաձուլվածքների, չմշակված ալյումինի, ալյումինի փոշիների և թեփուկների՝ ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երկրներ արտահանման ժամանակավոր լիցենզավորման պահանջ:
- Նախատեսվում է, որ արտահանման հիմնական լիցենզիաները տրամադրելու է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը՝ դիմումը ներկայացնելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում: Լիցենզավորման համար պետական տուրքը հաշվարկվելու է յուրաքանչյուր մինչև մեկ տոննա ապրանքի համար:
- Սահմանափակումը չի տարածվելու ժամանակավոր ներմուծման կամ մաքսային տարածքում վերամշակման ընթացակարգերով ներմուծված և հետագայում վերաարտահանվող ապրանքների, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ պետություններից պայմանագրի հիման վրա Հայաստան տեղափոխված և երրորդ երկրներ արտահանվող ապրանքների վրա:

«Ռիելթորական գործունեության միասնական տեղեկատվական համակարգի տվյալների շտեմարան ստեղծելու և դրա կանոնակարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

- Նախագծով առաջարկվում է ստեղծել ռիելթորական գործունեության միասնական տեղեկատվական համակարգի տվյալների շտեմարան և սահմանել դրա կառավարման, շահագործման, տվյալների հավաքագրման, պահպանման ու պաշտպանության կարգը: Շտեմարանի կառավարիչը լինելու է Կադաստրի կոմիտեն:
- Մասնավորապես, շտեմարանում հավաքագրվելու են ռիելթորների, անշարժ գույքի կառավարիչների և համապատասխան կազմակերպությունների հաշվառման, որակավորման և ապահովագրության, ինչպես նաև անշարժ գույքի, հայտարարությունների և ծառայությունների մատուցման պայմանագրերի վերաբերյալ տեղեկությունները:
- Նախատեսվում է, որ անշարժ գույքի սեփականատերերն իրենց անձնական գրասենյակի միջոցով կարող են դիտել սեփական գույքի տվյալները, հրապարակել հայտարարություններ, դիմել ռիելթորական կամ կառավարման ծառայությունների համար և հետևել պայմանագրերի կարգավիճակներին: Գույքի նույնականացման տվյալներն ինքնաշխատ ստացվելու են Կադաստրի կոմիտեի տեղեկատվական համակարգերից և օգտատերերի կողմից փոփոխման ենթակա չեն լինելու:
- Միաժամանակ սահմանվելու են տվյալների հասանելիության, անձնական տվյալների պաշտպանության և համակարգում կատարված գործողությունների էլեկտրոնային հաշվառման պահանջներ: Գործողությունների մատյանները պահպանվելու են հինգ տարի, եթե օրենքով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ: